



USAID
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԻՑ



Internews



**ՀԼՖՈՐՄԱՅԻՄԱՅԻ
ԱԶԱՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆ**

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԻՆՖՈՐՄԱՅԻՄԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆ



ԵՐԵՎԱՆ 2024

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻ/ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Վերլուծություն և առաջարկներ

Այս վերլուծության շրջանակներում վերհանել ենք տեղեկատվության ազատության անկախ լիազոր մարմնի ստեղծման անհրաժեշտությունը Հայաստանի ստանձնած միջազգային հանձնառությունների համատեքստում՝ հաշվի առնելով ՏԱ ոլորտում արձանագրված թե՛ ձեռքբերումները, և թե՛ բացթողումները: Ներկայացրել ենք նաև տարբեր երկրներում գործող անկախ լիազոր մարմինների մոդելները, դրանց գործառնությունների ամփոփ նկարագիրը: Ներկայացրել ենք նաև առաջարկներ՝ Հայաստանում ՏԱ անկախ լիազոր մարմնի ստեղծմանն աջակցելու նպատակով:

Սույն վերլուծությունը հնարավոր է դարձել Ամերիկայի ժողովրդի առատաձեռն աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) միջոցով: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Ինտերնյուս Նեթվորքի ենթադրամաշնորհառու Ինֆորմացիայի ազատության կենտրոն ՀԿ-ն, և այն պարտադիր չէ, որ արտահայտի ԱՄՆ ՄԶԳ-ի կամ Միացյալ Նահանգների կառավարության տեսակետները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՍՓՈՓԱԳԻՐ	3
Ա. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ	5
Բ. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ ԵՎ ԱՅԼ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ.....	10
Գ. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏԱ ԱՆԿԱԽ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԶԵԿՈՒՅՑՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ	14
Դ. ՏԱ ՈԼՈՐՏԸ ՎԵՐԱՀՄԿՈՂ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻՆԵՐԻ ՄՈՂԵԼՆԵՐ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՓՈՐՁԸ.....	18
Ե. ԱՌԱՋԱՐԿՆԵՐ	28
Զ. ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ	31

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Տեղեկատվության ազատության (SU) իրավունքը մարդու հիմնարար իրավունքներից է, որի բացակայության պայմաններում մարդու համար էապես դժվարանում է այլ իրավունքների իրականացումը: Այս իրավունքի պատշաճ ապահովումը և որոշումների կայացման թափանցիկությունը բարձրացնում են պետական մարմինների նկատմամբ հանրային վստահությունը՝ խթանելով ժողովրդավարության զարգացումն ու ամրապնդումը: Պետական մարմինների հրապարակայնությունը, ինչպես նաև թե՛ լրագրողական համայնքին, և թե՛ հանրությանը տեղեկատվության ժամանակին և որակյալ տրամադրումը, հիմնարար դեր ունեն նաև թվային դարաշրջանում արագ տարածվող ապատեղեկատվությունը կանխելու գործում:

Կարևորելով տեղեկություն ստանալու իրավունքն ամբողջ աշխարհում, ինչպես նաև Հայաստանում, ընդունվել են տեղեկատվության ազատության վերաբերյալ իրավական ակտեր («Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք): SU իրավունքն ամրագրվել է սահմանադրություններում (ՀՀ սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածներ) և միջազգային իրավական ակտերում:

Տեղեկատվության ազատության մասին Հայաստանի Հանրապետության օրենքն ընդունվել է 2003 թ. սեպտեմբերի 23-ին (ուժի մեջ է մտել 2003թ.-ի նոյեմբերի 15-ին): Անցած ավելի քան երկու տասնամյակների ընթացքում դրսևորվեցին ինչպես օրենքի կենսունակությունն ու հասարակական անհրաժեշտությունը, այնպես էլ ի հայտ եկան մի շարք բացթողումներ ու խոչընդոտներ, որոնց բարելավումը կբարձրացնի օրենքի կիրառելիությունը:

Աշխարհում տեղեկատվության ազատության վերաբերյալ 140 օրենքերից¹ ավելի քան 95-ում սահմանված է անկախ վերահսկում իրականացնող որևէ մարմին, որը հաճախ կոչվում է տեղեկատվության ազատության հանձնաժողով կամ հանձնակատար, որին մարդիկ կարող են դիմել՝ բողոքարկելու տեղեկատվության ազատության տարաբնույթ խախտումները:

Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը՝ տեղեկատվության ազատության իրավունքի խախտումները բողոքարկելու ամենից արդյունավետ մեխանիզմը բողոքարկումն է տեղեկատվության ազատության անկախ և անկողմնակալ մարմնին: Նման անկախ մարմնի առկայությունը կարևոր է նաև SU ոլորտի բարելավմանն ուղղված այնպիսի գործիքակազմի ստեղծման և զարգացման համար, ինչպիսին է՝ SU օրենսդրության կիրառման համապարփակ և կանոնավոր մշտադիտարկումը, ոլորտի վերահսկողությունը, միասնական վիճակագրության վարումը, առկա խնդիրների վերհանումը և դրանց շտկմանն ուղղված գործողությունները, օրենքի կիրառման վերաբերյալ խորհրդատվությունը, տեղեկություն տնօրինողների, լրագրողական համայնքի և հանրության կարողությունների հզորացումը և այլն:

¹ Տես՝ SU ոլորտը կարգավորող օրենսդրության որակը գնահատելու համաշխարհային գործիքը, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.rti-rating.org/country-data/>:

Թեև ՏՄ լիազոր մարմնի մասին նշվում է թե՛ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքում, թե՛ ՀՀ կողմից վավերացված Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին Եվրոպայի խորհրդի Կոնվենցիայում² (այսուհետև նաև՝ Կոնվենցիա), սակայն Հայաստանում այդ մարմինը դեռևս ձևավորված չէ: Կոնվենցիայում, որը Հայաստանը ստորագրել է 2020 թ. հունիսի 24-ին և վավերացրել 2022 թ. մայիսի 4-ին, ընդգծվում է, որ տեղեկություն ստանալու իրավունքի խախտման բողոքարկման գործընթացը պետք է լինի *արագ և ոչ ծախսատար*: Մինչդեռ Հայաստանում ՏՄ իրավունքի պաշտպանության այլընտրանքը դեռևս մնում են դատարանները, որոնք սակայն չունեն անկախ լիազոր մարմիններին բնորոշ գործիքակազմ: Ինչպես նաև, դատական բողոքարկումը տևական ժամանակ և մեծ ռեսուրսներ պահանջող գործընթաց է:

Այս վերլուծության շրջանակներում վերհանել ենք տեղեկատվության ազատության անկախ լիազոր մարմնի ստեղծման անհրաժեշտությունը Հայաստանի ստանձնած միջազգային հանձնառությունների համատեքստում՝ հաշվի առնելով ՏՄ ոլորտում արձանագրված թե՛ ձեռքբերումները, և թե՛ բացթողումները: Ներկայացրել ենք նաև տարբեր երկրներում գործող անկախ լիազոր մարմինների մոդելները, դրանց գործառույթների ամփոփ նկարագիրը: Ներկայացրել ենք նաև առաջարկներ՝ Հայաստանում ՏՄ անկախ լիազոր մարմնի ստեղծմանն աջակցելու նպատակով:

² Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին ԵՄ Կոնվենցիան հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.coe.int/en/web/access-to-official-documents>:

Ա. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

SU օրենսդրության միջազգային ինդեքսում 2024թ.-ին 144 երկրների ցանկում Հայաստանի Հանրապետությունը զբաղեցնում է 38-րդ տեղը³: Վերջին տարիներին տեղեկատվության ազատության ոլորտում տեղի են ունեցել մի շարք դրական զարգացումներ: Տեղեկատվության ազատության զարգացմանն ուղղված էական քայլ էր 2022 թ.-ին ՀՀ-ի կողմից Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին ԵԽ [կոնվենցիայի](#) վավերացումը: Քաղաքացիական հասարակությունը, ի դեմս Ինֆորմացիայի ազատության կենտրոնի, դեռևս 2018-ից ակտիվ քայլեր սկսեց ձեռնարկել ուղղված Կոնվենցիայի վավերացմանը⁴, քանի որ սա առաջին միջազգային փաստաթուղթն է, որով պետությունները ոչ միայն ճանաչում են տեղեկատվության մատչելիության իրավունքը, այլև համաձայնում են ապահովել այդ իրավունքի իրացումը և համագործակցել մատչելիության ոլորտում: Փաստաթուղթը մի կողմից հաստատում է միջազգային պայմանագրերով և ՀՀ ներպետական օրենսդրությամբ սահմանված տեղեկատվության ազատության հիմնարար իրավունքը, մյուս կողմից՝ սահմանում է պետական մարմինների բաց և թափանցիկ աշխատելու պարտականությունը⁵:

Մեկ այլ դրական փոփոխություն էր 2021թ.-ի դեկտեմբերին տեղեկատվության ազատության իրավունքի խախտման համար վարչական պատասխանատվության չափի բարձրացմանն ուղղված՝ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի ներկայացրած հանրագրի ընդունումը: Փաստաթուղթը ներկայացնում էր Վարչական իրավախախտումների մասին օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին առաջարկություն և նախագիծ, որով առաջարկվում էր տեղեկատվություն ստանալու իրավունքի խախտման համար կիրառվող վարչական տուգանքների չափերը բարձրացնել, ինչն ընդունվեց նախ ՀՀ արդարադատության նախարարության, այնուհետև նաև Ազգային ժողովի կողմից:⁶

Օրենսդրական փոփոխությունն ուժի մեջ մտավ 2022թ.-ի հոկտեմբերի 14-ին՝ սահմանելով, որ տեղեկություն տնօրինողների կողմից տեղեկությունն ապօրինաբար չտալու համար նախատեսվում է 50-ից 70 հազար դրամի չափով տուգանք, իսկ նույն խախտումը մեկ տարվա ընթացքում կրկին կատարելու դեպքում նախկին 50-ից 100 հազար դրամի փոխարեն նախատեսվել է 100-ից 150 հազար դրամի չափով տուգանք: Այս նախաձեռնության հաջող իրականացումը դիտվեց որպես քաղաքացիական հասարակության և կառավարության միջև համագործակցության դրական օրինակ՝ SU խախտման համար պատասխանատվությունն ուժեղացնելու նպատակով:

Ոլորտի բարելավմանն ուղղված մեկ այլ ռազմավարական քայլ էր ՀՀ ապատեղեկատվության դեմ պայքարի 2024-2026 թվականների հայեցակարգի և դրանից բխող գործողությունների ծրագրի ընդունումը 2023 թվականի դեկտեմբերի 27-ին: Այս ռազմավարական փաստաթղթերը, ի թիվս այլնի, նպատակ են հետապնդում նպաստել

³ «Global Right to Information rating, Armenia» Ինդեքսը հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.rti-rating.org/historical/>:

⁴ ՀՀ-ի կողմից Կոնվենցիայի վավերացման գործընթացի մասին առավել մանրամասն տես՝ https://foi.am/success_stories/3724:

⁵ Կոնվենցիայի բացատրական զեկույցը հասանելի է այստեղ՝ https://foi.am/u_files/file/legislation/EuropeConventioneng.pdf:

⁶ ԻԱԿ-ի ներկայացրած հանրագրի մասին առավել մանրամասն տես՝ https://foi.am/success_stories/3696:

պաշտոնական տեղեկությունների մատչելիությանը և պրոակտիվ հաշվետվողականությանը՝ ակնկալելով պետական կառույցների առավել թափանցիկ, հաշվետու աշխատանքին միտված ձևաչափերի և հարթակների գործարկում, առկա ռեսուրսների բարելավում, պետական կառույցներում հաղորդակցության բարելավում, մեդիագրագիտության և փաստերի ստուգման հմտությունների զարգացում⁷:

Չնայած զգալի առաջընթացին, տեղեկատվության ազատության ոլորտը դեռևս լի է տարաբնույթ խնդիրներով, որոնք վերաբերում են ինչպես ոլորտի իրավական կարգավորումներին, այնպես էլ դրանց կիրառմանը և էական խոչընդոտ են լրագրողական ազատությունների և մեդիա առաքելության իրականացման տեսանկյունից:

Ավելի քան 21 տարի գործող Տեղեկատվության ազատության մասին ՀՀ [օրենքի](#) (այսուհետ նաև՝ ՏԱ օրենք) կիրառման պրակտիկան ցույց է տալիս, որ այն դեռևս լիարժեք չի կիրառվում: Տեղեկատվության ազատության ոլորտում հայաստանյան միակ մասնագիտացած հասարակական կազմակերպության՝ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի (ԻԱԿ)՝ 2022 թ.-ին իրականացրած հետազոտության⁸ մեջ ընդգրկված 39 տեղեկություն տնօրինողներից 35-ը (տեղեկություն տնօրինողների 90%-ը) տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել են ՏԱ օրենսդրության առնվազն մեկ պահանջի խախտմամբ: Արդյունքում, 39 տեղեկություն տնօրինողներից միայն 4-ն են (տեղեկություն տնօրինողների 10%-ը) իրենց հասցեագրված հարցումներին տրամադրել օրենքին համապատասխան պատշաճ պատասխան (ամբողջական, պատասխանին ներկայացվող պահանջներին համապատասխան, ժամանակին):

2024 թ.-ին ԻԱԿ-ի հրապարակած՝ «Լրագրողների տեղեկություն ստանալու իրավունքը» հետազոտությունը⁹ վկայում է, որ տեղեկություն ստանալու գործընթացում առկա լրջագույն խնդիրներից է հարցումներին տրված պաշտոնական պատասխանների որակը: Հետազոտության մեջ ներգրավված լրագրողների կեսից ավելին հարցումների պատասխանների բովանդակությունը գնահատել է անբավարար (54.9%): Լրագրողների 61%-ը տարբեր պարբերականությամբ բախվում է այնպիսի իրավիճակների, երբ տեղեկություն տնօրինող պետական մարմինը պահանջում է հիմնավորել, թե ինչու է լրագրողը տվյալ հարցումը ներկայացրել և/կամ ինչպես է պատրաստվում օգտագործել տեղեկությունները: Նման պահանջ ներկայացնելը տեղեկատվության ազատության ազգային և միջազգային կանոնակարգերի ուղղակի խախտում է:

Ուշադրության է արժանի նաև խտրականության խնդիրը: Լրագրողական համայնքի ներկայացուցիչների 64,5%-ը մատնանշում է, որ տեղեկություն տրամադրելիս պետական մարմինները խտրականություն են դնում տարբեր լրատվամիջոցների և լրագրողների միջև, ընդ որում՝ հարցվածների միայն 2.6%-ը խտրականության դեպքերի չի առնչվել: Խախտումները վերաբերում են նաև տեղեկության տրամադրման ժամկետներին:

⁷ Ապատեղեկատվության դեմ պայքարի հայեցակարգը և գործողությունների ծրագիրը հասանելի են հետևյալ հղմամբ՝ <https://foi.am/researches/3743>:
⁸ «Տեղեկատվության ազատությունը ՀՀ-ում» հետազոտություն, Ինֆորմացիայի ազատության կենտրոն, 2022 թ., հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://foi.am/wp-content/uploads/2023/10/Տեղեկատվության-ազատությունը-ՀՀ-ում-ԻԱԿ-2022-1.pdf>:
⁹ «Լրագրողների տեղեկություն ստանալու իրավունքը-2024» հետազոտություն, Ինֆորմացիայի ազատության կենտրոն, 2024 թ. հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://foi.am/researches/36079>:

լրագրողների միայն 35%-ն է նշել օրենքով սահմանված 5-օրյա ժամկետում պատասխան ստանալու մասին:

Ոլորտի առանցքային խնդիրներից է նաև այն, որ Հայաստանում տեղեկատվության ազատության իրավունքի պաշտպանության միակ հնարավորությունը դատական պաշտպանությունն է: Միաժամանակ, դատական պաշտպանության առաձևահատկությունները հնարավորություն չեն տալիս պրակտիկայում առանց պետական հոգաձության լուծել տեղեկատվության ազատության ոլորտի խնդիրները: Տեղեկատվությունն արագ հնանում է, իսկ դատաքնության երկարաժամկետ լինելու դեպքում այն այլևս անհրաժեշտ չի լինում: Բացի այդ, դատարան դիմելը ծախսատար և ժամանակատար գործընթաց է: Նշենք նաև, որ դատական կարգով ՏՄ իրավունքի պաշտպանության ապահովումը մինչ այսօր մեծամասամբ իրականացնում են հասարակական կազմակերպությունները: Օրինակ, Ինֆորմացիայի ազատության կենտրոնը ՀԿ-ն նախաձեռնել է 70-ից ավելի ռազմավարական դատական գործ ընդդեմ պետական և մասնավոր կառույցների, որոնք խախտել են տեղեկատվության ազատության իրավունքը:¹⁰

ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի «2023 թվականի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին» տարեկան հաղորդման մեջ նշվում է, որ «2023 թվականին տեղեկություններ ստանալու իրավունքի խախտումների վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանին է հասցեագրվել թվով 62 դիմում-բողոք: Դիմում-բողոքները բովանդակում են այնպիսի խնդիրների մասին տեղեկություններ, ինչպիսիք են, օրինակ, լրագրողական գործունեության ընթացքում տեղեկություններ ստանալու նպատակով հարցման առնչությամբ տեղեկության տրամադրումը մերժելու, օրենքով սահմանված ժամկետում հայցվող տեղեկությունը չտրամադրելու կամ ամբողջությամբ չտրամադրելու հարցերը»:¹¹

ՀՀ ՏՄ մասին օրենքով սահմանված մարմիններին ուղղված հարցումների և դրանց արդյունքների վերաբերյալ միասնական վիճակագրության բացակայությունը, ինչպես նաև այն, որ Հայաստանում չի իրականացվել ՏՄ օրենսդրության ազդեցության անկախ գնահատում, հնարավորություն չեն տալիս վերհանել առկա խնդիրների ամբողջական սպեկտրը: Իսկ ոլորտի լրջագույն խնդիրը մնում է անկախ վերահսկման մեխանիզմի բացակայությունը:

Տեղեկատվության ազատության անկախ և անկողմնակալ մարմնի առկայությունը կարևոր է ՏՄ ոլորտի բարելավմանն ուղղված այնպիսի գործիքակազմի ստեղծման և զարգացման համար, ինչպիսիք են ՏՄ օրենսդրության կիրառման համապարփակ և կանոնավոր մշտադիտարկումը, ոլորտի վերահսկողությունը, միասնական վիճակագրության վարումը, առկա խնդիրների վերհանումը և դրանց շտկմանն ուղղված գործողությունները, օրենքի կիրառման վերաբերյալ խորհրդատվությունը, տեղեկություն տնօրինողների, լրագրողական համայնքի ու հանրության կարողությունների

¹⁰ Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախաձեռնած դատական գործերին կարելի է ծանոթանալ այստեղ՝ <https://foi.am/freedom-of-information/strategic-litigation>:

¹¹ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի (ՄԻՊ) 2023 թ. տարեկան հաղորդում ՄԻՊ գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին, էջ 217: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://ombuds.am/images/files/c21b3daa983465bea149c85cf9f2ceec3.pdf>:

հզորացումը և այլն: ՏՄ հանձնակատար ունենալու պահանջն անուղղակիորեն սահմանված է Տեղեկատվության ազատության մասին օրենքում: Այսպես, ՏՄ մասին օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ կետը սահմանում է, որ «Տեղեկատվության տրամադրման մերժումը կարող է բողոքարկվել լիազորված պետական կառավարման մարմին կամ դատարան», սակայն մինչ օրս Հայաստանում ձևավորված չէ ոլորտի պետական լիազոր որևէ մարմին:

Ինչպես ցույց է տալիս միջազգային պրակտիկայի վերլուծությունը, ՏՄ ոլորտի լիազոր մարմինը կամ ՏՄ հանձնակատարը հանդիսանում է ՏՄ իրավունքի խախտումների բողոքարկման արտադատական մարմին: Այն անկախ է՝ ունենալով օրենսդրությամբ ամրագրված անկախության գործուն երաշխիքներ, որպեսզի կարողանա լիարժեք իրականացնել իր գործառույթները, որոնք են.

- իրականացնել տեղեկատվության ազատության իրավունքի հանրահռչակում և խթանում,
- իրականացնել տեղեկատվության ազատության իրավունքի արտադատական պաշտպանություն՝ լուծելով տեղեկատվության ազատության ոլորտում առաջացած վեճերը,
- իրականացնել ՏՄ մասին օրենքի կիրառման կանոնավոր և համապարփակ մշտադիտարկում, այդ թվում՝ ՏՄ պրակտիկայի վերլուծություն և լավագույն փորձի ներդրում,
- ապահովել ՏՄ իրավունքի իրացման վերաբերյալ խորհրդատվություն ինչպես քաղաքացիների, այնպես էլ տեղեկություն տնօրինող մարմինների համար,
- ապահովել ՏՄ ոլորտի օրենսդրության պարզաբանում և այլն:

Տեղեկատվության ազատության լիազոր մարմնի ձևավորումը մի շարք առանցքային զարգացումներ կարող է ապահովել Հայաստանում: Մասնավորապես.

1. ՏՄ լիազոր մարմնի ստեղծումը կարող է ծառայել ՏՄ իրավունքի պաշտպանությանը՝ ՏՄ օրենսդրության միասնական կիրառման ապահովման և տեղեկություն ստանալու իրավունքի խախտումների բողոքարկման գործընթացներում չարաշահումները բացառելու միջոցով:
2. ՏՄ լիազոր մարմինը կարող է նպաստել կառավարության թափանցիկության բարձրացմանը և հանրային իշխանությունների հաշվետվողականության ամրապնդմանը՝ ապահովելով, որ ՏՄ իրավունքի խախտումներն արագ, անկողմնակալ և արդյունավետ լուծում ստանան:
3. Մարմինը կարող է հանդես գալ որպես կամուրջ քաղաքացիների և պետական կառույցների միջև՝ նպաստելով տեղեկությունների ազատության վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը և այդ իրավունքի գործնական իրականացման հնարավորությունների ընդլայնմանը: Միևնույն ժամանակ հասարակությունը կարիք ունի իմանալու, թե ինչպես է գործում ՏՄ իր իրավունքը, ինչպես պետք է դիմել տեղեկություն ստանալու համար, տեղեկություն ստանալու ինչ ընթացակարգ գոյություն ունի և վերջապես, ինչպես բողոքարկել ՏՄ իրավունքի խախտումները: Կարևոր է նաև, որ հասարակությունն իմանա, թե օրենքով նախատեսված ՏՄ սահմանափակումների հիման վրա որ տեղեկատվության տրամադրումն է ենթակա մերժման, որպեսզի հիմնավոր մերժումները չհանգեցնեն պետական մարմինների հանդեպ վստահության նվազման:

4. SU լիազոր մարմին ունենալու անհրաժեշտության մյուս հիմնավորումը SU իրավունքի խախտումների անկախ վերանայումն է: Որպես գործունեության հիմնական նպատակ՝ SU լիազոր մարմինը (հանձնակատարը) պետք է ընդունի և քննի SU իրավունքի խախտման վերաբերյալ բողոքները՝ անկախ այն բանից, թե ինչպիսի խախտման մասին է խոսքը՝ անօրինական մերժում, լուռ մերժում, թե SU իրավունքի այլ խախտում:
5. SU լիազոր մարմնի (հանձնակատարի) հիմնադրման մեկ այլ հիմնավորում է SU օրենսդրության կիրառման պրակտիկայի համակողմանի մշտադիտարկման և միասնական վիճակագրության անհրաժեշտությունը: Կանոնավոր և համալիր տվյալների հավաքագրումը կարող է ուղեցույց լինել SU իրավունքի և SU ստանդարտների արդյունավետ իրականացման համար:
6. SU լիազոր մարմինը (հանձնակատարը) կարող է նաև նպաստել միջազգային լավագույն փորձի և ստանդարտների ներդրմանը SU ոլորտում, ինչը մի կողմից կբարելավի տեղեկատվության ազատության իրավիճակը երկրում, մյուս կողմից կբարձրացնի պետության հեղինակությունը գլոբալ մակարդակում:
7. SU հանձնակատարի ինստիտուտի հիմնադրման կարևորագույն հիմնավորում է նաև պետական մարմիններին, քաղաքացիական հասարակությանը տեղեկատվության ազատության վերաբերյալ լավագույն փորձի մասին իրազեկելու, խորհրդատվություն տալու, տեղեկություն տնօրինողներին և քաղաքացիներին կրթելու անհրաժեշտությունը: Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի 9-րդ հոդվածը սահմանում է պետության պարտականությունը իրազեկել հասարակությանը պաշտոնական տեղեկատվություն ստանալու իրավունքի մասին, որն ի թիվս այլնի ներառում է նաև պաշտոնյաներին տեղեկություն տրամադրելու իրենց պարտականության մասին կրթելու և իրազեկելու գործառույթ: Ներկայում այս դրույթն ընդհանրապես չի կատարվում պետության կողմից, այլ իրականացվում է միայն քաղաքացիական հասարակության ջանքերի շնորհիվ:

Վերոնշյալներն են SU լիազոր մարմնի (հանձնակատարի) ստեղծման անհրաժեշտության հիմնական, բայց ոչ սպառիչ հիմնավորումները, ուստի դրանցից յուրաքանչյուրն ունի իր ենթահիմնավորումները և ենթադրում է SU հանձնակատարի նշանակությանը համահունչ գործառույթներ:

Հայաստանում SU լիազոր մարմնի ստեղծման առանցքային մարտահրավերը մնում է ամուր քաղաքական կամքը՝ պետական համակարգի թափանցիկությունն ու հաշվետվողականությունն ապահովող այս կարևորագույն երաշխիքներից մեկը կյանքի կոչելու համար: Անկախ, անաչառ, բավարար ռեսուրսներ ունեցող և արդյունավետ արտադատական մարմնի ստեղծումը պահանջում է ոչ միայն նոր իրավական կարգավորումներ, այլ նաև մի շարք ինստիտուցիոնալ և գործնական նկատառումներ: Մյուս կողմից՝ SU օրենքի գործունեության բազմամյա պատմությունը ցույց է տվել, թե անկախ լիազոր մարմինը ինչ առանցքային դեր կունենա առկա բացթողումները շտկելու և տեղեկատվության ազատության լիարժեք կիրառումն ապահովելու գործում:

Բ. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ ԵՎ ԱՅԼ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Տեղեկատվության ազատության ոլորտը Հայաստանի Հանրապետությունում կարգավորվում է ՀՀ կողմից վավերացված միջազգային իրավական ակտերով, ՀՀ Սահմանադրությամբ, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով: Հայաստանը՝ որպես մի շարք միջազգային կազմակերպությունների անդամ, ստորագրել է մարդու իրավունքներին վերաբերող կարևորագույն միջազգային փաստաթղթեր: Դրանով իսկ Հայաստանը պարտավորվել է հարգել մարդու իրավունքները, այդ թվում՝ արտահայտվելու և տեղեկատվության ազատության իրավունքները:

Եվրոպական իրավունքի ոլորտում մարդու իրավունքները սահմանող երեք հիմնական միջազգային փաստաթղթերն են Մարդու իրավունքների համընդհանուր Հռչակագիրը, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին Եվրոպական կոնվենցիան ու Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային համաձայնագիրը: Տեղեկություն փնտրելու և ստանալու իրավունքը հռչակվում է Մարդու իրավունքների համընդհանուր Հռչակագրի 19-րդ, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին Եվրոպական կոնվենցիայի 10-րդ, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային համաձայնագրի 19-րդ հոդվածներով:

Որպես ՄԱԿ-ի անդամ (1992 թ.-ից)՝ Հայաստանը միացել է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրին¹², որի Հոդված 19-ում հռչակվում է. «Յուրաքանչյուր ոք ունի համոզմունքներ ունենալու և արտահայտվելու իրավունք. այս իրավունքը ներառում է համոզմունքներին անարգել հավատարիմ մնալու և տեղեկություններ ու գաղափարներ որոնելու, ստանալու ու տարածելու ազատություն՝ լրատվության ցանկացած միջոցներով, անկախ պետական սահմաններից»:

2002թ.-ին Հայաստանը՝ որպես Եվրոպայի խորհրդի անդամ, վավերացրել է Մարդու իրավունքների մասին եվրոպական կոնվենցիան¹³, որի 10-րդ հոդվածը պաշտպանում է արտահայտվելու և տեղեկատվության ազատությունները: Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին Եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածը սահմանում է. «Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք»: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու, տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից: Այս հոդվածը չի խոչընդոտում պետություններին՝ սահմանելու ռադիոհաղորդումների, հեռուստատեսային կամ կինեմատոգրաֆիական ձեռնարկությունների լիցենզավորում:

Կոնվենցիան նախատեսում է նաև թույլատրելի սահմանափակումներ, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական

¹² Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը հայերեն՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docID=1896>, անգլերեն՝ [Universal Declaration of Human Rights | United Nations](https://www.unhcr.org/refugees/35695c57.html):

¹³ Մարդու իրավունքների մասին եվրոպական կոնվենցիան հայերեն՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docID=20870>, անգլերեն՝ [European Convention on Human Rights - ECHR Official Texts - ECHR - ECHR / CEDH](https://www.echr.coe.int/T/H/ITR/Convention.aspx):

անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու համար:

Հայաստանը վավերացրել է նաև Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը¹⁴ (1993թ.-ին), որի 19-րդ հոդվածում խոսվում է կարծիք ունենալու իրավունքի և, անկախ պետական սահմաններից, ցանկացած տեսակի տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատության մասին:

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեն 2011թ.-ին մշակել է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 19-րդ հոդվածի մեկնաբանման ուղեցույց¹⁵: Անդրադառնալով տեղեկատվություն տնօրինողներին, տեղեկության հասկացությանը՝ ուղեցույցը ներառել է նաև դրույթներ հանրային նշանակություն ունեցող պաշտոնական փաստաթղթերի մատչելիության վերաբերյալ: Մասնավորապես, ուղեցույցում նշված է, որ տեղեկատվության ազատության իրավունքի իրականացման համար դաշնագրի մասնակից պետությունները պետք է ակտիվորեն հրապարակայնացնեն հանրային նշանակություն ունեցող պաշտոնական տեղեկությունները, ապահովեն այդպիսի տեղեկատվության հեշտ, արագ, արդյունավետ և պրակտիկ հասանելիությունը: Համաձայն ուղեցույցի՝ մասնակից պետությունները պետք է նաև համապատասխան միջոցներ ձեռնարկեն, որոնց դեպքում կապահովվի տեղեկության մատչելիությունը և տեղեկություններ փնտրելու և ստանալու հնարավորությունը: Այդպիսի միջոց է, օրինակ, տեղեկատվության ազատության վերաբերյալ օրենսդրությունը: Ուղեցույցն արձանագրում է, որ պետք է ժամանակին ընթացք տրվեն տեղեկություն ստանալու հարցումներին՝ դաշնագրով սահմանված կանոններին համապատասխան:

Անդրադարձ է կատարվել նաև տեղեկության տրամադրման համար վճարներին՝ սահմանելով, որ դրանք չպետք է այնպիսին լինեն, որ տեղեկության տրամադրման արգելք դառնան: Մասնակից պետությունները պետք է ապահովեն, որ տեղեկության տրամադրումը մերժվի միայն հիմնավոր պատճառներով, ինչպես նաև ստեղծվեն բողոքարկման մեխանիզմներ տեղեկության տրամադրումը մերժելու կամ տեղեկություն ստանալու հարցումներին չպատասխանելու դեպքում:

2009թ.-ի հունիսի 18-ին Եվրոպայի խորհրդի կողմից ընդունվեց Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին կոնվենցիան¹⁶, որը սահմանում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման, ինչպես նաև հանրային նշանակության մարմինների պաշտոնական փաստաթղթերի մատչելիությունը և կարգավորում է դրա

¹⁴ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը անգլերեն՝ [International Covenant on Civil and Political Rights | OHCHR](https://www.arlis.am/documentview.aspx?docID=18500), հայերեն՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docID=18500>:

¹⁵ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 19-րդ հոդվածի մեկնաբանման ուղեցույցը հասանելի է այստեղ՝ [CCPR/C/GC/34](https://www.coe.int/t/e/legislation/conventions/CCPR/C/GC/34), տես՝ էջ 4-5:

¹⁶ Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին ԵՄ Կոնվենցիա՝ <https://www.coe.int/en/web/access-to-official-documents>:

հետ կապված իրավահարաբերությունները: Համաձայն կոնվենցիայի նախաբանի՝ կոնվենցիան ընդունվել է՝ հաշվի առնելով պետական մարմինների թափանցիկության կարևորությունը բազմակարծ և ժողովրդավարական հասարակությունում, ինչպես նաև այն, որ «*պաշտոնական փաստաթղթերի հասանելիության իրավունքի գործադրումը հանրության համար տեղեկատվության աղբյուր է, օգնում է հանրությանը կարծիք կազմել հասարակության վիճակի և պետական մարմինների վերաբերյալ, նպաստում է պետական մարմինների ազնվությանը, կարողություններին, արդյունավետությանը և պատասխանատվությանը՝ դրանով իսկ օգնելով նրանց լեգիտիմության հաստատմանը*»:

Այս փաստաթուղթը, մի կողմից ևս մեկ անգամ հաստատելով միջազգային պայմանագրերով և ՀՀ ներպետական օրենսդրությամբ սահմանված՝ տեղեկատվության ազատության հիմնարար իրավունքը՝ մյուս կողմից սահմանում է պետական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների, մեկ բառով՝ իշխանության բաց և թափանցիկ աշխատելու պարտականությունը և իշխանության իրական կրողի՝ ժողովրդի կողմից վերահսկելի լինելու սկզբունքը: ՀՀ-ն Կոնվենցիան վավերացրել է 2022թ.-ի մայիսի 4-ին:

Անկախ լիազոր մարմին ունենալու պարտականությունն ուղղակիորեն բխում է այս Կոնվենցիայի 8-րդ հոդվածից, որի համաձայն՝ այն անձը, ում պաշտոնական տեղեկատվություն ստանալու հարցումը մերժվել է, մերժումը դատական կարգով կամ օրենքով ստեղծված այլ անկախ և անաչառ մարմնին բողոքարկելու իրավունք ունի (Հոդված 8, կետ 1), ընդ որում՝ բողոքարկման գործընթացը պետք է լինի արագ և ոչ ծախսատար (Հոդված 8, կետ 2): Ի լրումն, Կոնվենցիայի բացատրական զեկույցում¹⁷ 8-րդ հոդվածի մեկնաբանություններում, Եվրոպայի խորհրդի կողմից նշվում է, որ «*Վերանայող մարմինը կամ պետք է ինքնուրույն կարողանա բեկանել պետական մարմինների կողմից ընդունված որոշումները, երբ համարում է, որ այդ որոշումները չեն համապատասխանում օրենսդրության պահանջներին, կամ պահանջել, որ տվյալ պետական մարմինը վերանայի իր որոշումը: Միննույն ժամանակ, չպետք է բացառել այլ իրավական և կարգապահական գործողությունների հնարավորությունը պետական այն մարմինների նկատմամբ, որոնք թույլ են տվել Կոնվենցիայով նախատեսված իրենց պարտավորությունների լուրջ խախտումներ: «Մերժում» տերմինը պետք է լայնորեն ընկալվի և ընդգրկի, օրինակ, 3-րդ հոդվածում թվարկված բացառությունների հիմքով փաստաթղթերի՝ հստակ կամ ենթադրելի, ամբողջությամբ կամ մասնակի մերժումը: Այն դեպքերում, երբ ազգային օրենսդրությունը ժամկետ է սահմանում տեղեկատվության հարցմանը պատասխանելու համար, դիմողը պետք է իրավունք ունենա բողոքարկել նաև վարչական լուրջության համար»¹⁸:*

ՏԱ ոլորտում Հայաստանը մի շարք հանձնառություններ է ստանձնել նաև որպես **ԵԱՀԿ մասնակից պետություն**, այդ թվում՝ 2012 թ. Դուբլինում կայացած, ԵԱՀԿ Նախարարների խորհրդի կողմից ընդունված հռչակագիրը, որում նշվում է, որ «*տեղեկատվության ազատությունը և մատչելիությունը խթանում են հանրային քաղաքականության թափանցիկությանը՝ հնարավորություն տալով ԶԼՄ-ներին և քաղհասարակությանը*

¹⁷ Կոնվենցիայի բացատրական զեկույցը հասանելի է այստեղ՝ https://foi.am/u_files/file/legislation/EuropeConventioneng.pdf:

¹⁸ Կոնվենցիայի բացատրական զեկույց, կետ 64-65, հասանելի է այստեղ՝ https://foi.am/u_files/file/legislation/EuropeConventioneng.pdf:

նպաստելու կոռուպցիայի կանխարգելմանն ու դրա դեմ պայքարին»: Հռչակագրում ԵԱՀԿ մասնակից պետությունները վերահաստատում են իրենց հանձնառությունը բարձրացնելու իրենց կառավարությունների թափանցիկությունը՝ զարգացնելով և ամրապնդելով այն գործընթացներն ու հաստատությունները, որոնք պարտավոր են տրամադրել արագ և մատչելի տեղեկատվություն և վստահելի վիճակագրական տվյալներ, ինչը կխթանի արդյունավետ, գիտելիքահեն երկխոսությունը»¹⁹:

2024թ.-ի մայիսի 3-ին՝ Մամուլի ազատության համաշխարհային օրվա առթիվ, Միավորված ազգերի կազմակերպության՝ խոսքի ազատության հարցերով հատուկ զեկուցողը, Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության ՋԼՄ-ների ազատության հարցերով ներկայացուցիչը, Ամերիկյան պետությունների կազմակերպության՝ կարծիքի և արտահայտման ազատության իրավունքի պաշտպանության հարցերով հատուկ զեկուցողը ու Մարդու և ժողովուրդների իրավունքների աֆրիկյան հանձնաժողովի՝ խոսքի և տեղեկատվության հարցերով հատուկ զեկուցողը հանդես են եկել **համատեղ հռչակագրով**²⁰:

Հռչակագիրը, որը նվիրված է կլիմայային ճգնաժամին և խոսքի ազատությանը, կոչ է անում պետություններին «ակտիվորեն ստեղծել, տարածել և թարմացնել բնապահպանական և կլիմայական տեղեկատվությունը, հատկապես այնպիսի հրատապ խնդիրների վերաբերյալ, ինչպիսիք են առողջությանը, անվտանգությանը և կենսաբազմազանությանը սպառնացող հնարավոր վտանգները: Այս պարտականությունը ներառում է ապահովել, որ բոլորը ստանան արագ և համապարփակ տեղեկատվություն»:

Հռչակագիրն ընդգծում է նաև, որ տեղեկատվության համարժեք հասանելիություն չտրամադրելը, լինի դա ինստիտուցիոնալ թերությունների, անարդյունավետ հանրային քաղաքականության կամ լրատվամիջոցների նկատմամբ անհարկի սահմանափակումների պատճառով, տեղեկատվության իրավունքի խախտում է:

ԵԱՀԿ տարածաշրջանում լրատվամիջոցների համար տեղեկատվության հասանելիության մասին իր զեկույցում²¹ ՋԼՄ-ների ազատության հարցերով ԵԱՀԿ ներկայացուցիչը մասնակից պետություններին ուղղված այլ առաջարկությունների թվում նշել է, որ «Պետք է արդյունավետ մեխանիզմ ստեղծել տեղեկատվության յուրաքանչյուր մերժման բողոքարկման համար: Սա ներառում է անկախ վերահսկող մարմնի ստեղծումը, ինչպիսին է ՏՄ հարցերով օմբուցմենը կամ հանձնակատարը, որը կարող է հետաքննել և կարգադրել, որ տեղեկատվությունը տրամադրվի: Այս մարմինը պետք է նաև զբաղվի տեղեկատվության ազատության մասին հանրային իրազեկմամբ և կրթությամբ»:

¹⁹ ԵԱՀԿ հանձնառությունները տեղեկատվության և մամուլի ազատության ոլորտում հասանելի են այստեղ՝ <https://www.osce.org/representative-on-freedom-of-media/99565>, էջ 64:

²⁰ Հռչակագիրը հասանելի է այստեղ՝ <https://www.osce.org/representative-on-freedom-of-media/567968>:

²¹ ԵԱՀԿ տարածաշրջանում ՋԼՄ-ների համար տեղեկատվության հասանելիության վերաբերյալ զեկույց, 2007 թ., էջ 4, <https://www.osce.org/files/f/documents/7/3/24892.pdf>:

Գ. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏԱ ԱՆԿԱԽ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԶԵԿՈՒՅՑՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Հայաստանում ՏԱ ոլորտը վերահսկող անկախ լիազոր մարմնի ստեղծման անհրաժեշտությանն անդրադարձել են մի շարք միջազգային կազմակերպություններ: Այդ թվում՝ Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խումբը (ԳՐԵԿՈ) 2024 թ. ապրիլի 18-ին հրապարակած՝ Հայաստանի պարտավորությունների կատարման գնահատման 5-րդ փուլի զեկույցում²², նշում է, որ «Տեղեկատվության ազատության մասին օրենսդրության մատչելիությունը (SUOU) ողջամտորեն համապարփակ է՝ տեղեկությունների ներկայացման և մշակման, տեղեկությունների մատվ պատասխանատու ծառայողների նշանակման համար սահմանված ընթացակարգերով և կանոններով»: Նշվում է նաև, որ քաղաքացիական հասարակությունը և Մարդու իրավունքների պաշտպանը կարևոր դեր են խաղում ՏԱՕՄ-ի իրականացման ընթացքին հետևելու գործում: «Մակայն չկա հատուկ ինստիտուցիոնալ մարմին, որը կապահովեր համակարգված և անկախ բողոքարկում, իրավիճակի մշտադիտարկում և օրենքի կիրառման միասնական պրակտիկա»:

Վերոհիշյալ զեկույցում ԳՐԵԿՈ-ի կողմից Հայաստանի իշխանություններին ներկայացված առաջարկությունների թվում են՝ «i) իրականացնել ՏԱ օրենսդրության կիրառման ազդեցության անկախ գնահատում՝ հատուկ ուշադրություն դարձնելով բացառությունների կիրառմանը, պատասխանների ժամանակին տրամադրմանը, պրոակտիվ հրապարակայնությանը և օրենքի արդյունավետ իրականացմանը, որին կհետևի հանրության համար տեղեկատվության մատչելիությունը բարելավելու ուղղությամբ անհրաժեշտ օրենսդրական և գործնական միջոցների ձեռնարկումը, ii) հավաքագրել և հրապարակել մերժումների, ուշացած կամ թերի պատասխանների հետ կապված հարցումների և բողոքների մասին պաշտոնական վիճակագրական տվյալներ և հանրությանը տրամադրել թերությունների վերացմանն ուղղված քայլերի մասին տեղեկատվություն, և iii) դիտարկել հատուկ անկախ վերահսկող մարմնի ստեղծման հարցը, որը կապահովի անկախ վերանայում, մշտադիտարկում և կզբաղվի տեղեկատվության ազատության օրենսդրության միասնական կիրառության խթանմամբ»:

Զեկույցում նշվում է նաև, որ «սույն զեկույցի ընդունումից հետո՝ 18 ամսվա ընթացքում, Հայաստանը պետք է զեկույցի ԳՐԵԿՈ-ի առաջարկություններին ի պատասխան ձեռնարկված գործողությունների մասին»:

Ինչպես նշվեց, անկախ լիազոր մարմին ունենալու պարտականությունն ուղղակիորեն բխում է նաև Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի 8-րդ հոդվածից, որի համաձայն՝ այն անձը, ում պաշտոնական տեղեկատվություն ստանալու հարցումը մերժվել է, մերժումը դատական կարգով կամ

²² Փաստաթուղթը հասանելի է հետևյալ հղմամբ, անգլերեն՝ <https://rm.coe.int/fifth-evaluation-round-preventing-corruption-and-promoting-integrity-i/1680af5d35>, տես կետեր 81, 87, հայերեն՝ <https://rm.coe.int/fifth-evaluation-round-preventing-corruption-and-promoting-integrity-i/1680af5d34>:

այլ անկախ և անաչառ պետական մարմնի բողոքարկելու իրավունք ունի, ընդ որում՝ բողոքարկման գործընթացը պետք է լինի **արագ և ոչ ծախսատար**:

2024թ.-ի սեպտեմբերի 26-ին Հայաստանը Կոնվենցիայի իրականացմանն ուղղված օրենսդրական և այլ միջոցառումների մասին իր երկրորդ տարեկան զեկույցն է ներկայացնել Եվրոպայի խորհրդի՝ Տեղեկատվության մատչելիության խմբին (SUԽ)²³:

SUԽ-ն անկախ փորձագետներից բաղկացած խումբ է, որի նպատակն է հետևել, թե Կոնվենցիայի կողմերն ինչ գործողություններ են իրականացնում կոնվենցիոն դրույթները կյանքի կոչելու համար: Կոնվենցիայի 8-րդ հոդվածի իրականացման առնչությամբ Հայաստանի, մասնավորապես՝ ՀՀ Արդարադատության նախարարության Անձնական տվյալների պաշտպանության գործակալություն կողմից տրամադրված զեկույցում նշվում է, որ *«տեղի են ունենում քննարկումներ տեղեկատվության ազատության հարցերով լիազոր մարմնի ստեղծման մասին»²⁴*: Չեկույցում Գործակալությունը նշում է նաև, որ *«իր ռազմավարական փաստաթղթերում՝ Գործակալությունը նախանշել է ծրագրեր, որոնք կիրականացվեն 2025 թվականին՝ ուղղված պաշտոնական փաստաթղթերի հասանելիության վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացմանը»²⁵*:

Իսկ SU ոլորտում լիազոր մարմնի բացակայության պայմաններում, որպես տեղեկատվության տրամադրման մեթոդը բողոքարկելու միակ միջոց նշվում են դատարանները: Հայաստանի կողմից Կոնվենցիայի իրականացման Ելակետային գնահատման նախագծում²⁶ (2024 թ. հոկտեմբերի 17, AIG(2024) 22) SUԽ-ը նշում է. *«Ըստ Կողմի տրամադրած տեղեկատվության, դատարաններում բողոքարկման գործընթացը կարող է տևել մի քանի ամսից մինչև մի քանի տարի: Այս գործընթացի համար գանձվող գումարը կարող է կազմել մոտ 25 եվրո: Գործընթացի տևողությունը, երբ այն գերազանցում է մի քանի ամիսը, չի համապատասխանում Կոնվենցիայի այն պահանջին, որ բողոքարկումը պետք է լինի արագ (Կոնվենցիայի Հոդված 8, կետ 2)»²⁷*:

Նշվում է նաև, որ *«տեղեկատվության ազատության համար պատասխանատու մարմնի բացակայության պայմաններում չկա որևէ պետական մարմին, որը միջոցներ կձեռնարկի պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին հանրային իրազեկմանն ուղղությամբ, և որ հանրային իրազեկման բեռը կրում են ՀԿ-ները՝ ոլորտի մասնագիտացված կազմակերպությունները: Մա չի համապատասխանում Կոնվենցիայի 8-րդ կետի պահանջներին»²⁸*: SUԽ-ն առաջարկում է բողոքարկման գործընթացն

²³ Report submitted by Armenia pursuant to Article 14 paragraph 2 of the Council of Europe Convention on Access to official Documents (CETS No.205), received by the Secretariat on 26 September 2024, <https://rm.coe.int/council-of-europe-group-on-access-to-information-aig-report-submitted-/1680b26666>:

Հայաստանի կողմից ներկայացված զեկույցը՝ համաձայն Պաշտոնական փաստաթղթերի մատչելիության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի 14-րդ հոդվածի 2-րդ կետի (Քարտուղարության կողմից ստացվել է 2024 թ. սեպտեմբերի 26-ին):

²⁴ Նույն տեղում, տես II գլխում:

²⁵ Նույն տեղում:

²⁶ Draft Baseline Evaluation Report on the implementation of the Council of Europe Convention on Access to Official Documents (CETS No.205) – Armenia, paragraph 42, <https://shorturl.at/8tTxK>, Հայաստանի կողմից Կոնվենցիայի իրականացման Ելակետային գնահատման նախագիծ, կետ 42:

²⁷ Նույն տեղում, կետ 42:

²⁸ Հայաստանի կողմից Կոնվենցիայի իրականացման Ելակետային գնահատման նախագիծ, կետ 43, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://shorturl.at/8tTxK>:

արագացնելու ուղղությամբ քայլեր ձեռնարկել՝ Կոնվենցիայի 8-րդ կետին համապատասխան²⁹:

2022թ.-ին Միավորված ազգերի կրթական, գիտական և մշակութային կազմակերպության (ՅՈՒՆԵՍԿՕ)-ի՝ Տեղեկատվության հանրային հասանելիության մասին հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ ՄԱԿ-ի 138 անդամ պետություններ, այդ թվում նաև Հայաստանը, սահմանադրական, օրենսդրական և/կամ տարբեր ռազմավարությունների մակարդակով ամրագրել են տեղեկատվության ազատության երաշխիքներ (ՄԱԿ-ի՝ Կայուն զարգացման նպատակ 16/թիրախ 16.10): *«Կարևորը սակայն այն է, որ այս երաշխիքների իրականացումը հիմնականում ենթադրում է ՏՄ ոլորտը վերահսկող անկախ և անաչառ մարմնի առկայությունն ու դրա արդյունավետ գործունեությունը, ինչպես նաև պետական մարմինների կողմից տեղեկատվության հասանելիության հետ կապված հարցերով պաշտոնյաներ նշանակելու պահանջը»*: Ջեկույցում նշվում է, որ *«այս պահանջների կատարումը մեծապես կխթանի ՏՄ երաշխիքների իրականացումը, հատկապես, երբ վերահսկող մարմինը, սովորաբար տեղեկատվական հանձնաժողովը կամ հանձնակատարը, անկախ հաստատություն է»³⁰*: Անդրադառնալով Հայաստանի կողմից մշակված՝ ապատեղեկատվության դեմ պայքարի հայեցակարգին, զեկույցում ընդգծվում է պետական կառույցների թափանցիկության և հաշվետվողականության գնահատման համակարգի ներդրման և պետական կառույցների պրոակտիվ հրապարակայնության կարևորությունը ապատեղեկատվությունը հայտնաբերելու, կանխելու և վերլուծելու գործում³¹:

Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը (ՏՀԶԿ) Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի չորրորդ փուլի զեկույցում (2018 թ.)³² անդրադարձել է Հայաստանում ՏՄ ոլորտին առնչվող նախորդ առաջարկությունների կատարմանը: Նախորդ երրորդ փուլի զեկույցում, ՏՀԿ-ն մասնավորապես առաջարկել էր (Առաջարկություն 20). *«ապահովել տեղեկատվության մատչելիության իրավունքի կատարման արդյունավետ վերահսկումը, ինչպես նաև սահմանել պարտադիր որոշումներ կայացնելու համապատասխան իրավասություններ և ապահովել ՏՄ պատասխանատուների նշանակումը յուրաքանչյուր պետական մարմնում, ինչպես պահանջվում է օրենքի 13-րդ հոդվածով»³³*:

Գնահատելով այդ առաջարկությունների կատարումը՝ չորրորդ փուլի գնահատման զեկույցում ՏՀԶԿ-ն նշում է, որ *«Հայաստանը զգալիորեն բարելավել է տեղեկատվության ազատության իրավական դաշտը՝ ընդունելով երկար սպասված ենթաօրենսդրական ակտերը: Նշանակվել և վերապատրաստվել են ՏՄ համար պատասխանատու աշխատակիցները: Էլեկտրոնային հարցումների հարթակը գործարկվել է*

²⁹ Նույն տեղում, կետ 54, ենթակետ 9:

³⁰ ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ Տեղեկատվության հանրային հասանելիության մասին 2022 թ. հետազոտությունն այստեղ՝ <https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000385479>.

³¹ Նույն տեղում՝ էջ 32:

³² (ՏՀԶԿ) Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի չորրորդ փուլի զեկույցը (2018 թ.)՝ անգլերեն՝ https://www.oecd.org/en/publications/anti-corruption-reforms-in-armenia_4b8baa87-en.html, հայերեն՝ https://transparency.am/storage/legal_acts_6138335560451_Ardir-OECD-ACN-Armenia-4th-Round-Monitoring-Report_ARM.pdf:

³³ Հայերեն տարբերակ, էջ 248:

վիճակագրություն ստեղծող վերլուծական մոդուլով, բայց հիմնված է միայն էլեկտրոնային հարցումների վրա... Սակայն դեռևս բացակայում են ՏՄ իրավունքի կիրառումը վերահսկող արդյունավետ մեխանիզմները, իսկ Մարդու իրավունքների պաշտպանի գործառույթները սահմանափակվում են միայն տեղեկատվության ազատության իրավունքի խախտման դեպքերի հետ կապված բողոքներով³⁴»:

Զեկույցն ընդգծում է նաև, որ «ՏՄ վերահսկող մարմին չի ստեղծվել՝ ապահովելու օրենքի միասնական կիրառումը, տվյալների լիարժեք հավաքագրումը և գերատեսչությունների ուղղորդումը»³⁵: Եզրահանգելով, որ Հայաստանը միայն մասամբ է կատարել նախորդ՝ երրորդ փուլի 20-րդ առաջարկությունների պահանջները, ներկայացրել է նոր առաջարկություններ, որոնցում, ի թիվս այլնի, հանձնարարում է՝ «ապահովել տեղեկատվության ազատության իրավունքի կիրառման արդյունավետ վերահսկողություն, ինչպես նաև բավարար իրավասություններ և միջոցներ՝ պարտադիր կատարման ենթակա որոշումներ կայացնելու համար» (Առաջարկություն 18, կետ 2)³⁶:

³⁴ ՏՀԶԿ) Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի մոնիթորինգի չորրորդ փուլի զեկույցը (2018 թ.)՝ անգլերեն՝ https://www.oecd.org/en/publications/anti-corruption-reforms-in-armenia_4b8baa87-en.html, հայերեն՝ https://transparency.am/storage/legal_acts_6138335560451_Ardir-OECD-ACN-Armenia-4th-Round-Monitoring-Report_ARM.pdf, էջ 252:

³⁵ Նույն տեղում՝ էջ 257:

³⁶ Նույն տեղում:

Դ. ՏԱ ՈԼՈՐՏԸ ՎԵՐԱՀՄԿՈՂ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻՆԵՐԻ ՄՈԴԵԼՆԵՐ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ. ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՓՈՐՁԸ

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ տեղեկություն ստանալու իրավունքի պաշտպանության լավագույն երաշխիքը տեղեկատվության ազատության հանձնակատարի անկախ ինստիտուտն է: Տարբեր երկրների օրենսդրություններում հաճախ տեսնում ենք, որ ՏԱ իրավունքի կիրառման մոնիթորինգը և վերահսկումը, տեղեկատվության մեթոման բողոքների անկախ և անաչառ քննումն ու որոշումների կայացումը, ՏԱ ոլորտում միասնական քաղաքականության ձևավորումը, հաշվետվությունը, տարբեր խմբերի կարողությունների հզորացումը, հանրային իրազեկումը և այլ գործառույթներ վստահված են մեկ անկախ լիազոր մարմնի՝ ՏԱ հանձնակատարին, իսկ երբեմն՝ հանձնաժողովին:

Միավորված ազգերի կրթական, գիտական և մշակութային կազմակերպության (ՅՈՒՆԵՍԿՕ) վերոհիշյալ ուսումնասիրության համաձայն, աշխարհում գործող ՏԱ ոլորտը վերահսկող անկախ մարմինների մեծ մասը (47) ՏԱ հանձնակատարներ են, որոնց հաջորդում են տարբեր պետական մարմիններ (33), և օմբուցմեններ (29), այնուհետև մարմիններ, որոնցում անձնական տվյալների պաշտպանության գործառույթը միացված է ՏԱ իրավունքի պաշտպանության հետ (26):

Միջազգային փորձի ուսումնասիրությամբ վերջին մոդելի (անձնական տվյալների պաշտպանության գործառույթը միացված ՏԱ իրավունքի պաշտպանության հետ) արդյունավետության մասին ընդհանրացված եզրահանգում անելը դժվար է, քանի որ այն կապված է մի շարք գործոնների հետ, այդ թվում՝ հանձնակատարների և նրանց աշխատակազմի գիտելիքներն ու փորձը թե՛ տեղեկատվության ազատության, և թե՛ անձնական տվյալների պաշտպանության ոլորտներում, ինչպես նաև բավարար ռեսուրսները՝ այս երկու իրավունքների պաշտպանությունը հավասարապես ապահովելու գործում:

Առանձահատուկ կարևորություն ունի, սակայն, հանձնակատարի քաղաքական անկախությունը, որը մեծապես վտանգված կլինի, եթե նման միացյալ մարմինը լինի կառավարության կազմում գործող հաստատություն, ինչը նաև չի համապատասխանի միջազգային օրենսդրությամբ, մասնավորապես ԵԽ Կոնվենցիայի այն հստակ պահանջին, որ ՏԱ հարցերով բողոքարկման մարմինը պետք է լինի անկախ:

Լիազոր մարմնի անկախության առավել հաճախ քննարկվող կողմերից մեկը ՏԱ հանձնակատարի/հանձնաժողովի ղեկավարների ընտրության/նշանակման մեխանիզմն է: «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ» հակակոռուպցիոն կոալիցիայի՝ 2024թ.

հետազոտության³⁷ համաձայն, «SU լիազոր մարմիններ ունեցող երկրների 36%-ին է հաջողվել հանձնակատարին նշանակել այնպես, որ նրանք պաշտպանված լինեն քաղաքական միջամտությունից (SU համաշխարհային ռեյտինգ՝ ըստ ցուցիչների, ցուցիչ 38): Տարբեր մեթոդներ են կիրառվում՝ ապահովելու համար, որ այդ նշանակումները լինեն ոչ կուսակցական: Ամենատարածված մեթոդը ներառում է գործադիր իշխանության առաջադրումները, որոնք պահանջում են օրենսդիր մարմնի կողմից հաստատում: Այս մոտեցումը կիրառվում է այնպիսի երկրներում, ինչպիսիք են Կանադան և Մեքսիկան: Իռլանդիայում և Հնդկաստանում օրենսդիր մարմնի կողմից առաջադրվում են թեկնածուներ, որպեսզի նախագահը ընտրի տեղեկատվության հանձնակատարին: Մյուս կողմից, որոշ երկրներ, օրինակ՝ Շվեդիան, հանձնակատարի կամ օմբուցմենի նշանակման համար ամբողջովին ապավինում են օրենսդիր մարմնին: Երբ խորհրդարանը հանդիսանում է նշանակման մեջ ներգրավված առաջնային մարմին, աջակցության պահանջվող շեմը կարող է էապես ազդել նշանակվողի օրինականության վրա: Շատ երկրներ նշանակման համար պահանջում են օրենսդիր մարմնում գերմեծամասնության ձայները, ինչը ազատ ընտրություններով ժողովրդավարական երկրներում կարող է օգնել պաշտպանել հանձնակատարի կամ օմբուցմենի անկախությունը: Գործող ժողովրդավարական երկրներում այս լայն քաղաքական կոնսենսուսը կարող է նվազեցնել կուսակցական նշանակումների հավանականությունը: Բացի այդ, այնպիսի երկրներ, ինչպիսիք են Ալբանիան և Նոր Զելանդիան, պահանջում են բազմակուսակցական կոալիցիա՝ հանձնաժողովականների ընտրության համար՝ ավելի ամրապնդելով լայն քաղաքական կոնսենսուսի անհրաժեշտությունը: Մեքսիկայում, օրենքը պահանջում է, որ օրենսդիրը խորհրդակցի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ՝ հանձնաժողովների թեկնածուներ ներկայացնելիս, ինտեգրելով հանրային կարծիքը և նպատակ ունենալով նվազեցնել քաղաքական ազդեցությունը»³⁸:

Այսպիսով, SU հանձնակատարի ինստիտուտի համար հիմնարար կարևորություն ունի, որ նրա ընտրությունն իրականացվի անկախ հանձնաժողովի կողմից, որը կներկայացնի միջկուսակցական բազմակարծությունը և կներառի անկախ իրավական փորձագետներին, քաղաքացիական հասարակության անդամներին: Կարևոր է նաև, որ ընտրությունը տեղի ունենա բաց և թափանցիկ մրցույթի հիման վրա՝ սահմանելով հստակ պահանջներ, որոնք կարտացոլեն հանձնակատարի գործառույթները հաջողությամբ և ամբողջովին իրականացնելու համար պահանջվող գիտելիքների և փորձի լայն շրջանակը, բարեվարքությունը, շահերի բախման բացառումը:

³⁷ «Տեղեկատվության իրավունքի կիրառում. մարտահրավերներ և լավագույն փորձ», «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ» հակակոռուպցիոն կոալիցիա, 2024 թ., էջ 16, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://knowledgehub.transparency.org/helpdesk/enforcement-of-the-right-to-information-challenges-and-best-practices>:

³⁸ «Տեղեկատվության իրավունքի կիրառում. մարտահրավերներ և լավագույն փորձ», «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ» հակակոռուպցիոն կոալիցիա, 2024 թ., էջ 16, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://knowledgehub.transparency.org/helpdesk/enforcement-of-the-right-to-information-challenges-and-best-practices>:

Լիազոր մարմնի ձևավորման մոդելը

Անդրադառնանք SU հանձնակատարների նշանակման տարբեր մոդելներին: Իռլանդիայում³⁹ SU հանձնակատարին առաջարկում է կառավարությունը, նշանակում՝ նախագահը, Սլովենիայում⁴⁰ առաջարկում է նախագահը, նշանակում՝ խորհրդարանը: Միացյալ Թագավորությունում⁴¹ նշանակում է միապետը (թագուհին/թագավորը): Մակեդոնիայում⁴² հանձնակատարին առաջարկում է կառավարությունը, նշանակում՝ խորհրդարանը, իսկ Սերբիայում⁴³ նշանակում է Ազգային ժողովը: Կանադայի հանձնակատարին⁴⁴ նույնպես նշանակում է խորհրդարանը: Առանձնանում է Ֆրանսիայի մոդելը, որտեղ Վարչական փաստաթղթերի մատչելիության հարցերի հանձնաժողովի ղեկավարը նշանակվում է նախագահի հրամանագրով⁴⁵ և բաղկացած է Պետական խորհրդի (որը նաև վարչական գործերով բարձրագույն դատական մարմինն է) ներկայացուցիչներից, պատգամավորներից, հանրային տեղեկատվության ոլորտի բարձրակարգ մասնագետներից և այլն:

Նշենք նաև, որ ուսումնասիրված երկրների հիմնական մասում SU հանձնակատարը հաշվետու է խորհրդարանների առջև, օրինակ՝ Սերբիայում, Մակեդոնիայում, Կանադայում, Հունգարիայում, Իռլանդիայում, Միացյալ Թագավորությունում:

Չնայած օրենսդիր մարմինների առջև հաշվետու լինելու պարտականությանը՝ SU հանձնակատար ունեցող ուսումնասիրված երկրների մեծ մասում հանձնակատարը համարվում է անկախ գործող մարմին, և դա հաստատվում է իրավական ակտով: Հաճախ SU օրենսդրություններում պարտադիր պայման է, որ հանձնակատարի թեկնածուն լինի անկուսակցական: Օրենքի այս դրույթն էլ ավելի է ընդլայնված Հնդկաստանում՝ սահմանելով, որ մասնավոր հատվածը ներկայացնող անձինք, ովքեր կարող են ուղղակորեն կապված լինել քաղաքական կուսակցությունների հետ, նույնպես չեն կարող առաջադրվել որպես թեկնածու: Մեկ այլ առավել հաճախ հանդիպող պայման է այն, որ թեկնածուին առաջադրելուց առաջ օրենսդիր մարմինը պետք է խորհրդակցի քաղհասարակության հետ՝ ստանալով նրանց առաջարկությունները և այդպիսով ապահովելով առավել լայն հանրային կոնսենսուս:

SU հանձնակատարի ինստիտուտը պետք է ունենա նաև ֆինանսական անկախություն՝ իր լիազորությունները պատշաճ կատարելու համար: Որպես կանոն՝ հանձնակատարները ֆինանսավորվում են պետական բյուջեից՝ առանձին տողով: Սակայն կան նաև ֆինանսավորման այլ մոդելներ: Օրինակ՝ Միացյալ Թագավորությունում SU հանձնակատարը հիմնականում ֆինանսավորվում է կազմակերպություններից գանձվող՝ տվյալների պաշտպանության վճարներից, որը ծածկում է հանձնակատարի գրասենյակի տարեկան ծախսերի ավելի քան 85%-ը: Սա

³⁹ Իռլանդիային SU հանձնակատարի և օրենսդրության մասին այստեղ՝ <https://www.oic.ie/en/organisation-information/2574c-foi-legislation/>:

⁴⁰ [Information Commissioner Act - IPRS](#), Սլովենիա:

⁴¹ Freedom of Information Act 2000, էջ 36, Մեծ Բրիտանիա:

⁴² [Law on free access to public information, North Macedonia](#):

⁴³ [Law on Free Access to Information of Public Importance, Serbia](#)

⁴⁴ [Access to Information Act, Canada](#):

⁴⁵ Ֆրանսիայում Փաստաթղթերի մատչելիության հարցերով հանձնաժողովի մասին այստեղ՝ <https://www.cada.fr/>:

լրացվում է կառավարության կողմից տրվող դրամաշնորհով՝ հանձնակատարի կողմից այլ օրենքների շրջանակում գործառույթների իրականացման համար:

SU հանձնակատարի ինստիտուտը քննարկելիս անհրաժեշտ է արձանագրել, որ այս ինստիտուտի լիարժեք կայացման համար կարևոր նշանակություն ունի **նրա որոշումների իրավական ուժը**: Կարևոր է, որ SU հանձնակատարի որոշումները՝ կապված SU իրավունքի խախտումների, այդ թվում՝ տեղեկություն ստանալու հարցումները անօրինական մերժելու հետ, չանտեսվեն պետական կառավարման մարմինների կողմից:

Այսպես, օրինակ՝ Իռլանդիայի, Մակեդոնիայի, Սերբիայի, Խորվաթիայի⁴⁶, Սլովենիայի, Կանադայի, Հնդկաստանի և այլ SU հանձնակատարների որոշումներն ունեն պարտադիր բնույթ պետական մարմինների համար:

Այլ երկրներում, օրինակ՝ Հունգարիայում, որտեղ հանձնակատարի որոշումներն ունեն խորհրդատվական բնույթ, նա ունի այնպիսի լիազորություններ, որոնք լրացնում են որոշումների խորհրդատվական բնույթը: Մասնավորապես, հանձնակատարն իրավունք ունի դիմելու պետական մարմինն և պահանջելու 30-օրյա ժամկետում տրամադրել տեղեկատվություն, թե պետական մարմինն ինչ միջոցառումներ է իրականացրել հանձնակատարի խորհրդատվական բնույթի որոշման մեջ նշված խախտումները վերացնելու ուղղությամբ: Բացի այդ, Հունգարիայի SU հանձնակատարը կարող է նախաձեռնել կարգապահական վարույթ խախտում թույլ տված պետական մարմնի դեմ, իր մտահոգություններով դիմել դատախազին, ինչպես նաև՝ խնդրել երկրի խորհրդարանին քննել գործը (խախտումը):

Մեկ այլ լիազորություն, որը հաճախ ունի SU հանձնաժողովը կամ հանձնակատարը վերաբերում է այսպես կոչված կառուցվածքային, վարչարարական և այլ փոփոխությունների կատարման պահանջին՝ տեղեկատվություն տնօրինող պետական մարմինների նկատմամբ: Օրինակ՝ Խորվաթիայում և Հնդկաստանում այս լիազորությունը ներառում է պետական մարմիններում առկա խախտումների և թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների հանձնարարում՝ իրականացման համար սահմանված հստակ ժամկետներով:

Հարկ է նշել նաև, որ Եվրամիության կազմում գտնվող այն պետությունները, որոնք Անձնական տվյալների պաշտպանության մասին 1995թ. հոկտեմբերի 24-ի 95/46/ԵՀ Դիրեկտիվի ներքո ձևավորել են անձնական տվյալների պաշտպանության լիազոր մարմիններ, հիմնականում ներառում են անձնական տվյալների և տեղեկատվության ազատության պաշտպանությունը մի մարմնում՝ SU և անձնական տվյալների հանձնակատարի իրավազորության ներքո:

Այսպես, տարբեր երկրների SU հանձնակատարների իրավազորությունների շրջանակում են ինչպես տեղեկատվության ազատության, այնպես էլ անձնական տվյալների պաշտպանության իրավունքները: Սա պայմանավորված է նաև նրանով, որ տեղեկատվության ազատության իրավունքը հաճախ անհրաժեշտ է հավասարակշռել հենց անձնական տվյալների պաշտպանության իրավունքի հետ: Օրինակ,

⁴⁶ Խորվաթիայի SU հանձնակատարի մասին առավել մանրամասն այստեղ՝ <https://pristupinfo.hr/o-povjereniku-za-informiranje/?lang=en>:

Գերմանիայում, Սլովենիայում, Միացյալ Թագավորությունում, Հունգարիայում, Սերբիայում, Էստոնիայում հաջողությամբ գործում է Անձնական տվյալների պաշտպանության և SU հանձնակատարը, որը քննում է և՛ անձնական տվյալներ պաշտպանության, և՛ SU վերաբերյալ բողոքները:

Իսկ հետևյալ երկրներում, տեղեկատվության ազատության բողոքներն ուսումնասիրելու նպատակով հատուկ մարմիններ են ստեղծվել՝ Կանադայում, Ավստրալիայում, Հնդկաստանում, Իռլանդիայում, Ֆրանսիայում և այլն:

Լիազոր մարմնի մոդելները

SU հանձնակատարի ինստիտուտներն իրենց կառուցվածքով և գործառույթներով մեծիմասամբ (և հատկապես ԵՄ-ում) նույնական են: Կարելի է առանձնացնել SU հանձնակատարի ինստիտուտի՝ Կանադայի, Ավստրալիայի, Հնդկաստանի, Իռլանդիայի փորձը, որոնց գործունեության բազմամյա աշխատանքի ուսումնասիրությունը հատկապես օգտակար կարող է լինել միջազգային փորձի տեսանկյունից: Ստորև ներկայացվում է նաև այլ երկրների փորձը, որոնք կառուցվածքային և հանձնակատարի նշանակման/ընտրության մեխանիզմների առումով հաճախ տարբեր են, սակայն ունեն մեկ ընդհանուր նպատակ և առաքելություն՝ ապահովել SU իրավունքի՝ պաշտպանության վերահսկողությունը և խթանել տեղեկատվության մատչելիությունը՝ օրենսդրությամբ իրենց վստահված հարուստ գործիքակազմի կիրառմամբ:

Կանադայի տեղեկատվության ազատության հանձնակատարն անկախ օմբուցմեն է (ստեղծվել է 1983 թ.-ին), որը նշանակվում է Կանադայի խորհրդարանի կողմից և հաշվետու է անմիջականորեն խորհրդարանին: Կանադայի SU հանձնակատարը քննում է անձանց դիմում-բողոքները, ովքեր գտնում են, որ խախտվել է Կանադայի SU մասին օրենքով սահմանված՝ տեղեկատվություն ստանալու իրենց իրավունքը:

SU հանձնակատարի աշխատանքն ապահովում է հանձնակատարի գրասենյակը: Մասնավորապես, Կանադայի SU հանձնակատարի գրասենյակը իրականացնում է հետազոտություններ և վեճերի քննություններ SU ոլորտում առկա բողոքները լուծելու համար, մշտադիտարկում է իրականացնում, թե ինչպես են դաշնային մարմինները կիրառում Կանադայի SU մասին օրենքը, ներկայացնում է SU հանձնակատարին դատարանում, մատուցում է իրավական խորհրդատվություն:

Հանձնակատարը վերահսկում է SU ոլորտում Կանադայի ֆեդերալ կառավարության իրականացրած պրակտիկան: Նա խրախուսում և օժանդակում է դաշնային մարմիններին ընդունել տեղեկատվության մատչելիության ապահովման այնպիսի մոտեցումներ, որոնք համահունչ են Կանադայի SU մասին օրենքի սկզբունքներին:

SU հանձնակատարը արտադատական կարգով լուծում է տեղեկատվության ազատության ոլորտում առաջացած վեճերը՝ դատարանին դիմելով միայն այն դեպքում, երբ խախտվում է անձի SU իրավունքը և ապացուցվում է, որ վեճի լուծումն արտադատական կարգով հնարավոր չէ:

Ավստրալիայի տեղեկատվության ազատության հանձնակատարի գրասենյակն անկախ կառավարական մարմին է, որը ստեղծվել է Ավստրալիայի SU հանձնակատարի մասին

իրավական ակտի հիման վրա 2010 թ.-ին (մինչ այդ Ավստրալիայում գործել է Գաղտնիության հանձնակատարի ինստիտուտը): Ավստրալիայի SU հանձնակատարի հիմնական գործառույթներն առնչվում են տեղեկատվության ազատության իրավունքին, տեղեկատվության գաղտնիությանը, ինչպես նաև տեղեկատվական քաղաքականությանը: Ավստրալիայի SU հանձնակատարի գրասենյակն ունի 3 հիմնական գործառույթ.

- ապահովել պաշտոնական տեղեկատվության հասանելիությունը, ներառյալ՝ Ավստրալիայի SU մասին օրենքով սահմանված՝ անձանց՝ փաստաթղթերի հասանելիության իրավունքը,
- ապահովել Գաղտնիության մասին Ավստրալիայի օրենքին համապատասխան՝ անհատի անձնական տեղեկությունների պաշտպանությունը,
- Ավստրալիայի կառավարությանը խորհրդատվություն տրամադրել տեղեկատվության ազատության իրավունքի ապահովման քաղաքականության վերաբերյալ:

Հնդկաստանում տեղեկատվության ազատության կենտրոնական հանձնակատարը ստեղծվել է 2005 թ.-ին՝ SU մասին Հնդկաստանի օրենքի համաձայն: Այն Հնդկաստանի կառավարությանն առընթեր լիազոր մարմին է, որն զբաղվում է անհատներից ստացված բողոքների անկախ քննությամբ:

Հնդկաստանի SU կենտրոնական հանձնակատարը ընդունում և քննում է յուրաքանչյուրի բողոքը, ով տեղեկատվություն է խնդրել SU մասին Հնդկաստանի օրենքի համաձայն և մերժում է ստացել, կամ այլ կերպ խախտվել է տեղեկատվության ազատության նրանց իրավունքը, օրինակ՝ արգելվել է ներկայացնել տեղեկություն ստանալու հարցում կամ տեղեկության տրամադրման համար պահանջվել է չափազանցված գումար: Հանձնակատարի որոշումները կատարման համար վերջնական են և պարտադիր:

Իռլանդիայի SU հանձնակատարի գրասենյակը ստեղծվել է 1998 թ.-ին՝ Տեղեկատվության ազատության մասին Իռլանդիայի օրենքի համաձայն⁴⁷: Հանձնակատարը անկախ լիազոր մարմին է, որին կառավարության առաջարկով նշանակում է նախագահը: Տեղեկատվության ազատության հանձնակատարի հիմնական գործառույթն այն է, որ նա կարող է վերանայել պետական մարմինների այն որոշումները, որոնք առնչվում են տեղեկատվության ազատության իրավունքին, տեղեկություն ստանալու հարցումներին: Հանձնակատարը նաև հրապարակում է տարեկան զեկույցներ, ուղեցույցներ և այլ նյութեր:

Ի լրումն հանձնակատարի և գլխավոր տնօրենի, գրասենյակն ունի նաև անձնակազմ, որին ղեկավարում է ավագ քննիչը: Հանձնակատարի գրասենյակին իր գործառույթունները կատարելու հարցում սատարում է նաև Օմբուցմենի գրասենյակը:

Անդրադառնանք **Միացյալ Թագավորության** փորձին: Տեղեկատվության հարցերով հանձնակատարի գրասենյակը (Information Commissioner's Office) ոչ գերատեսչական հանրային մարմին է, որն ուղղակիորեն հաշվետու է խորհրդարանին և ֆինանսավորվում է Գիտության, նորարարության և տեխնոլոգիաների դեպարտամենտի կողմից: Այն

⁴⁷ Իռլանդիայի SU հանձնակատարի գրասենյակի մասին տես՝ <https://www.oic.ie/en/>:

անկախ կարգավորող մարմին է, որը նշանակվում է թագավորի/թագուհու կողմից, և հետևում է Անհատական տվյալների պաշտպանության մասին 2018 թվականի օրենքի, 2003 թ. Գաղտնիության և էլեկտրոնային հաղորդակցությունների մասին և 2004 թ. բնապահպանական տեղեկատվության մասին կարգերի, 2000թ.-ի Տեղեկատվության ազատության մասին օրենքի պահպանմանը Անգլիայում, Ուելսում և Հյուսիսային Իռլանդիայում և, սահմանափակ չափով, Շոտլանդիայում (այդ երկրի SU մասին օրենքի ապահովման ոլորտը գնվում է Շոտլանդիայի SU հանձնակատարի իրավասության տակ՝ SU մասին 2002 թ. օրենքի համաձայն):

Հանձնակատարի գործունեության շրջանակն ընդլայնվել է 2005թ.-ին՝ ներառելով Տեղեկատվության ազատության մասին օրենքի և այլ հարակից օրենքների ոլորտը: Այս փոփոխությունից հետո պաշտոնը Տվյալների պաշտպանության հանձնակատարից վերանվանվել է Տեղեկատվության հարցերով հանձնակատարի: Հանձնակատարը նաև թողարկում է Տեղեկատվության ազատության օրենսդրության մեկնաբանության/կիրառման վերաբերյալ ուղեցույցներ տարբեր խմբերի համար, որը թարմացվում է հանձնակատարի երկամյա ռազմավարական պլանի շրջանակներում:

Միացյալ թագավորության SU հանձնակատարի գրասենյակի առաքելությունն է պաշտպանել տեղեկատվություն ստանալու հանրության իրավունքը՝ նպաստելով պետական մարմինների հրապարակայնությանը և տվյալների գաղտնիության ապահովմանը ֆիզիկական անձանց համար: Հանձնակատարի որոշումների նկատմամբ հսկողություն իրականացնում են դատարանները և տեղեկատվական տրիբունալը:

Մերբիայում SU ոլորտի օրենսդրության կիրառումը վերահսկելու համար պատասխանատու մարմինը Հանրային կարևորության տեղեկատվության և անձնական տվյալների պաշտպանության հանձնակատարն է: Հանձնակատարի գրասենյակը անկախ մարմին է, որը գործում է 2005թ.-ից: Հանձնակատարը նշանակվում է Մերբիայի Հանրապետության Ազգային ժողովի կողմից՝ Ազգային ժողովի տեղեկատվության համար պատասխանատու հանձնաժողովի առաջարկությամբ: Եթե պետական մարմինը չի պատասխանում քաղաքացիների հարցումներին սահմանված ժամկետում, ապա դիմողը կարող է բողոք ներկայացնել Հանձնակատարին: Հանձնակատարը օրենքով իրավունք ունի որոշումներ կայացնել վիճելի գործերի վերաբերյալ, և նրա որոշումները ենթակա են պարտադիր կատարման պետական և օրենքի շրջանակում գտնվող որևէ այլ մարմինների կողմից:

Տեղեկատվության ազատության իրավունքի խախտման հետ կապված անհատական բողոքները քննելուց բացի, Հանձնակատարը նաև քաղաքացիներին տրամադրում է խորհրդատվություն, թե ինչպես օգտվել տեղեկատվության իրավունքից, պետական մարմիններին տրամադրում է կարծիքներ և կազմակերպում դասընթացներ՝ օրենքի կիրառման և առնչվող այլ հարցերի վերաբերյալ:

Գերմանիայի տեղեկատվության ազատության և անձնական տվյալների պաշտպանության հանձնակատարը դաշնային հանձնակատար է, որը, ինչպես հուշում է

պաշտոնի անվանումը, ինչպես անձնական տվյալների պաշտպանության, այնպես էլ տեղեկատվության ազատության (2006 թ.-ից) հանձնակատար է⁴⁸:

Հանձնակատարն անկախ վերահսկող մարմին է, որը դիտարկում է անձնական տվյալների պաշտպանության վիճակը դաշնային մարմիններում, կազմակերպություններում, հեռահաղորդակցության և փոստային ծառայություններում: Հանձնակատարը ներկայացնում է կիսամյակային զեկույցներ:

Գերմանիայի SU և անձնական տվյալների պաշտպանության հանձնակատարը առաջադրվում է Գերմանիայի դաշնային կառավարության կողմից և ընտրվում Գերմանիայի խորհրդարանի՝ Բունդեսթագի կողմից: Գերմանական հանձնակատարի առանձնահատկություններից է, որ թեև ենթադրվում է, որ պետք է հանրային պաշտոնյա լիներ, սակայն իրականում պաշտոնն առավել նման է քաղաքացիական ծառայողի պաշտոնի: Գերմանիայում հանձնակատարը պաշտոնավարում է 5 տարի՝ վերընտրվելու հնարավորությամբ:

Սլովենիայի SU հանձնակատարն իր գործունեությունը ծավալում է Անձնական տվյալների պաշտպանության մասին, Հանրային տեղեկատվության մատչելիության մասին և Հանրային ՋԼՄ-ների մասին օրենքների շրջանակներում: SU հանձնակատարի ինստիտուտը Սլովենիայում գործում է 2005 թ.-ից: Տեղեկատվության մատչելիության ոլորտում Սլովենիայի SU հանձնակատարի հիմնական գործառույթներն են. i) կայացնել որոշում տեղեկություն տնօրինող մարմինների այն որոշումների բողոքարկման վերաբերյալ, որոնցով մերժվել են տեղեկություն ստանալու հարցումները, կա՛մ խախտվել է հանրային տեղեկատվության մատչելիության, կա՛մ՝ վերաօգտագործման (օգտագործման) իրավունքը; ii) իրականացնել հսկողություն հանրային տեղեկատվության մատչելիության վերաբերյալ իրավական ակտերի իրականացման նկատմամբ:

Նմանատիպ փորձ ենք տեսնում նաև **Էստոնիայում**: Էստոնիայի տվյալների պաշտպանության տեսչությունը ազգային վերահսկիչ մարմին է, որը գործում է 2008թ.-ից՝ համաձայն Անձնական տվյալների պաշտպանության ակտի, Հանրային տեղեկատվության (2000 թ.)⁴⁹ և Էլեկտրոնային հաղորդակցության մասին օրենքների: Տեսչությունը զբաղվում է անձնական տվյալների մշակման ժամանակ գաղտնիության իրավունքների խախտման, ինչպես նաև Էստոնիայի հանրային մարմինների կողմից տեղեկատվության մերժման դեպքերով: Ի լրումն անձնական տվյալների գաղտնիության և տեղեկատվության ազատության պաշտպանությանը, տեսչությունը տրամադրում է նաև խորհրդատվություն օրենքների մեկնաբանության և կիրառման վերաբերյալ, ինչպես նաև հրապարակում տարեկան զեկույցներ վերոհիշյալ օրենքների կիրառման մասին: Տեսչության անկախությունն ամրագրված է օրենքով: Տեսչության կայացրած որոշումները ենթակա են պարտադիր կատարման:

Գոյություն ունեն նաև ընդհանուր հարցերով օմբուցմենի մոդելները, օրինակ՝ Ֆինլանդիայում⁵⁰, Շվեդիայում և Մոլդովայում: Ըստ այս մոդելի, SU հարցերով

⁴⁸ Գերմանիայի SU մասին ակտն այստեղ՝ https://www.gesetze-im-internet.de/englisch_ifg/index.html:

⁴⁹ Էստոնիայի Հանրային տեղեկատվության մասին օրենքն այստեղ՝ <https://www.riigiteataja.ee/akt/119122012005>:

⁵⁰ [Ֆինլանդիայի խորհրդարանական Օմբուցմենի մասին ակտ](#) (2002 թ.):

օմբուցմենը կարող է համապատասխան պաշտոնյային կամ պետական մարմիններին առաջարկություններ և հանձնարարականներ ներկայացնել SU օրենսդրության կիրառման մասին: Թեև այս օմբուցմենների որոշումները իրավական ուժ չունեն, այնուամենայնիվ, այս ինստիտուտներն ունեն բարձր հեղինակություն և կշիռ: Օրենքի խախտումներ հայտնաբերելու դեպքում՝ օմբուցմենը պետական մարմիններին ներկայացնում է հանձնարարական խախտումը շտկելու համար: Անհամաձայնության դեպքում պետական մարմինները կարող են որոշումը բողոքարկել վարչական դատարանում, որը, եթե պարզի, որ օմբուցմենի որոշումը իրավական տեսանկյունից ճիշտ է, այն կթողնի անփոփոխ: Օմբուցմենը իրավասու է նաև նախազգուշացում և տուգանք կիրառել տեղեկատվության ապօրինի մերժումների համար:

Լիազոր մարմնի գործառույթները

SU հանձնակատարների/լիազոր մարմնի միջազգային պրակտիկան ցույց է տալիս, որ այս մարմնի գործառույթների ընդհանրացված պատկերը հետևյալն է.

- վերանայել SU հարցումների վերաբերյալ պետական մարմինների որոշումները, անհրաժեշտության դեպքում՝ պարտադիր կատարման ենթակա որոշումներ կայացնել:
- Իրականացնել հարկադրական գործունեություն (իրավական սանկցիա) այն պաշտոնատար անձանց նկատմամբ, որոնք արհամարհում կամ հրաժարվում են կատարել իրենց պարտականությունները հրապարակայնության ապահովման ոլորտում:
- Ստուգել տարբեր մարմինների գործունեությունը տեղեկատվության ազատության բնագավառում:
- Անհրաժեշտության դեպքում տրամադրել խորհրդատվություն և աջակցություն դիմող քաղաքացիներին, ինչպես նաև պետական մարմիններին այս կամ այն փաստաթղթի տրամադրման ենթակա լինելու վերաբերյալ:
- Իրականացնել SU իրավիճակի համապարփակ և կանոնավոր մշտադիտարկում և հրապարակել SU-ի իրավիճակը գնահատող տարեկան զեկույց:
- Մշակել SU հարցումների և որոշումների վիճակագրական տվյալներ:
- Հանրահռչակել SU օրենքը բնակչության շրջանում, մշակել և հրապարակել SU օրենքի կատարման ուղեցույցներ:
- Տրամադրել SU հարցումների հետ կապված խորհրդատվություն և աջակցություն (ներազդելու գործառույթ)
 - SU հարցման ցանկացած փուլում,
 - Դիմողի, գերատեսչության կամ երրորդ կողմի խնդրանքով:
- Տրամադրել խորհրդատվություն SU օրենքի վերաբերյալ օրենսդրական քաղաքականության հարցում:
- Ներկայացնել գործող SU օրենսդրության փոփոխությունների և լրամշակումների առաջարկություններ, ինչպես նաև առաջարկություններ SU ոլորտում այս կամ այն անհրաժեշտ իրավական ակտերն ընդունելու վերաբերյալ:

- Ապահովել պաշտոնական տեղեկությունների մատչելիությունը, բացառությամբ այն դեպքերի, երբ կան տեղեկությունները չհրապարակելու հիմնավոր պատճառներ (օրինակ՝ պետական անվտանգության նկատառումներ):
- Իրականացնել կրթական գործառույթ (երկրի ողջ տարածքում պետական մարմինների և ՏԻՄ ներկայացուցիչների համար կազմակերպել ուսուցումներ):

Լիազոր մարմիններն ունեն պարտականությունների հետևյալ շրջանակը.

- Ապահովել, որ պետական մարմինները տեղեկացված լինեն ՏԱ օրենքով նախատեսված իրենց պարտականությունների մասին:
- Ապահովել, որ հանրության ներկայացուցիչները տեղեկացված լինեն ՏԱ օրենքի և իրենց իրավունքների մասին:
- Աջակցություն տրամադրել հանրության ներկայացուցիչներին և պետական մարմիններին՝ ՏԱ օրենքի հետ կապված հարցերում:
- Խորհրդարանին առաջարկել, թե ինչ օրենսդրական կամ վարչական փոփոխություններ են անհրաժեշտ ՏԱ օրենքի նպատակներին հասնելու համար:

Ե. ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Հաշվի առնելով միջազգային լավագույն փորձը և տեղեկատվության ազատության իրավունքի պաշտպանության առանձնահատկությունները՝
Հայաստանի կառավարությանն առաջարկում ենք.

1. Նախաձեռնել SU լիազոր մարմնի (տեղեկատվության ազատության պաշտպանության հանձնակատարի) սահմանադրական ինստիտուտի ստեղծումը:
2. Ձևավորել SU լիազոր մարմնի/հանձնակատարի ինստիտուտի ստեղծման հարցերով աշխատանքային խումբ, որը բաղկացած կլինի կառավարության, Ազգային ժողովի, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի, ոլորտում ակտիվ հասարակական կազմակերպությունների, լրագրողական համայնքի ներկայացուցիչներից և անկախ փորձագետներից:
3. Մասնակցային գործընթացի պայմաններում համատեղ մշակել ՀՀ Սահմանադրության, ՀՀ SU մասին օրենքում և այլ հարակից օրենքներում փոփոխությունների նախագիծ, որը կապահովի **պետական կառավարման մարմիններից դուրս, անկախ SU լիազոր մարմնի/հանձնակատարի ինստիտուտի ստեղծումը:**
4. Նախագծում սահմանել իրական երաշխիքներ SU լիազոր մարմնի անկախության ապահովման համար, այդ թվում՝
 - SU հանձնակատարի թեկնածուներ առաջադրելու բաց և թափանցիկ գործընթաց՝ հաշվի առնելով նաև թեկնածուների գենդերային ներկայացվածությունը, ընտրության արդար, մրցակցային մեխանիզմները:
 - Սահմանել, որ թեկնածուների ընտրությունն իրականացվի անկախ հանձնաժողովի կողմից, որը կներկայացնի կուսակցական բազմակարծությունը և կներառի նաև անկախ իրավական փորձագետների, քաղաքացիական հասարակության անդամների:
 - Սահմանել մրցութային հստակ պահանջներ, որոնք կարտացոլեն հանձնակատարի գործառույթները հաջողությամբ և ամբողջովին իրականացնելու համար պահանջվող *գիտելիքի և փորձի լայն շրջանակը, բարեկարգությունը, շահերի բախման բացառումը:*
 - Սահմանել SU հանձնակատարի ֆինանսական անկախությունը՝ առանձին տողով բյուջեի հատկացմամբ՝ ներառելով SU հանձնակատարի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները:
 - Սահմանել SU հանձնակատարի գործունեության ողջամիտ ժամկետ, որը նրան հնարավորություն կտա իր մանդատի և ռազմավարական պլանի շրջանակներում նախատեսված գործողությունները կյանքի կոչել: Միևնույն ժամանակ սահմանել երաշխիքներ հանձնակատարին քաղաքական ճնշման արդյունքում, կամայականորեն պաշտոնից հեռացնելը բացառելու համար:

5. Սահմանել SU հանձնակատարի/լիազոր մարմնի իրավագործությունների հետևյալ նվազագույն շրջանակը.

- ՀՀ-ում ապահովել SU իրավունքի պաշտպանությունը:
- Իր նախաձեռնությամբ կամ համապատասխան դիմումի հիման վրա ստուգել տեղեկություն տնօրինողների գործունեության համապատասխանությունը SU օրենսդրությանը:
- Համապատասխան դիմումի հիման վրա՝ վերանայել SU հարցումների վերաբերյալ տեղեկություն տնօրինողների որոշումները (հարցումների պատասխանները) և կայացնել պարտադիր կատարման ենթակա որոշումներ:
- Կիրառել օրենքով սահմանված վարչական պատասխանատվության միջոցներ:
- SU վերաբերյալ տրամադրել խորհրդատվություն և տեղեկացնել SU լավագույն փորձի մասին:
- Ստուգել տարբեր մարմինների գործունեությունը տեղեկատվության ազատության բնագավառում:
- Պատրաստել և հրապարակել SU-ի իրավիճակը գնահատող տարեկան զեկույց՝ հիմնված կանոնավոր և համապարփակ մշտադիտարկման վրա:
- Պատրաստել և հրապարակել SU հարցումների և որոշումների միասնական վիճակագրական տվյալներ:
- Ներկայացնել գործող SU օրենսդրության փոփոխությունների և լրամշակումների առաջարկություններ, ինչպես նաև առաջարկություններ SU ոլորտում այս կամ այն անհրաժեշտ իրավական ակտերն ընդունելու վերաբերյալ:
- Ապահովել պաշտոնական (մասնավորապես՝ պրոակտիվ հրապարակման ենթակա) տեղեկությունների մատչելիությունը:
- Իրականացնել հանրային իրազեկման և կրթական գործառույթ (տեղեկություն տնօրինողների և այլ անձանց համար կազմակերպել և իրականացնել ուսուցումներ):

SU հանձնակատարի որոշումները կարող են բողոքարկվել դատարանում: Հանձնակատարը պետք է բաց լինի քաղհասարակության, լրագրողական համայնքի, հանրության և միջազգային կազմակերպությունների հետ արդյունավետ երկխոսության համար:

6. Կազմակերպել օրենսդրական փաթեթի վերաբերյալ հանրային քննարկումներ՝ հանրության լայն խմբերի ներգրավմամբ:

Քաղաքացիական հասարակության կազմակերպություններին և լրագրողական համայնքին առաջարկում ենք.

1. Կազմակերպել քննարկումներ և արշավներ՝ հանրությանն իրազեկելու յուրաքանչյուրի տեղեկատվություն ստանալու իրավունքի կիրառման հարցում անկախ լիազոր մարմնի գործառույթների և կարևորության մասին: Այս իրազեկումը էական նշանակություն կունենա պետական մարմինների թափանցիկության ու հաշվետվողականության հանրային պահանջ ձևավորելու գործում:

2. SU ոլորտին առնչվող, հակակոռուպցիոն և այլ համաժողովներում, հետազոտություններում, Հայաստանում հակակոռուպցիոն բարեփոխումների և SU ոլորտը գնահատող միջազգային կազմակերպությունների հետ հարցազրույցների շրջանակում ակտիվորեն անդրադառնալ Հայաստանում SU անկախ լիազոր մարմնի բացակայությանը և դրանից բխող բացթողումներին, որոնք թույլ չեն տալիս հասնել SU օրենքի լիարժեք կիրառությանն ու կառավարության առավել բարձր թափանցիկությանը:
3. Ակտիվորեն և կառուցողաբար ներգրավվել օրենսդրական փոփոխությունների նախագծի ստեղծման աշխատանքներին՝ ներկայացնելով առաջարկներ, որոնք կամրապնդեն SU հանձնակատարի/լիազոր մարմնի անկախությունը, գործառույթների պատշաճ շրջանակն ու պարտականությունները:
4. Ակտիվորեն լուսաբանել SU ոլորտը վերահսկող մարմնի բացակայության պայմաններում պետական մարմինների կողմից տեղեկատվության մերժման, ժամկետանց տրամադրման և օրենքի այլ խախտումների հետ կապված խնդիրները՝ ընդգծելով այդ խախտումների բացասական ազդեցությունը լրագրողական աշխատանքի և հետևաբար՝ հանրության տեղեկություն ստանալու իրավունքի վրա:

Հայաստանում հակակոռուպցիոն բարեփոխումների ընթացքը և տեղեկատվության ազատության իրավունքի կիրառումը գնահատող/վերլուծող միջազգային կազմակերպություններին (ԵՄ ԳՐԵԿՈ, ԵՄ ՏՄԽ, ՏՀԶԿ, ինչպես նաև ՅՈՒՆԵՍԿՕ և այլն) առաջարկում ենք.

1. Շարունակել ուշադրության կենտրոնում պահել Հայաստանում SU անկախ հանձնակատարի/լիազոր մարմնի բացակայության խնդիրը՝ վերհանելով դրա բացասական ազդեցությունը SU իրավունքի լիարժեք կիրառման վրա՝ Հայաստանի միջազգային հանձնառությունների և միջազգային լավագույն փորձի հիման վրա:
2. Շարունակել երկխոսությունը Հայաստանի՝ SU ոլորտում ակտիվ քաղաքացիական հասարակության և լրագրողական համայնքի ներկայացուցիչների հետ, ինչը հնարավորություն կտա տեղեկանալ առկա խնդիրների մասին և հասցեական առաջարկություններ ներկայացնել SU ոլորտի բարեփոխումների, այդ թվում նաև՝ SU անկախ լիազոր մարմնի ստեղծման մեխանիզմների, անկախության երաշխիքների, գործիքակազմի և դրանց հասնելու ճանապարհային քարտեզի մասին:

Զ. ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ

Պետական մարմինների կողմից ՏԱ օրենքի լիարժեք կատարումն ապահովելու և հանրությանն ու լրագրողական համայնքին ժամանակին, որակյալ տեղեկատվություն տրամադրելու համար հիմնարար դեր ունի անկախ լիազոր մարմնի առկայությունն ու արդյունավետ գործունեությունը: Միջազգային կազմակերպությունների կողմից վաղուց ներդրված են ՏԱ ոլորտը կարգավորող օրենսդրության որակը գնահատելու համաշխարհային գործիքներ և չափանիշներ, որոնց թվում են՝ տեղեկատվության մեթոման դեպքերի պարզ, արագ, անվճար և անաչառ բողոքարկման մեխանիզմները, ինչպես նաև ոլորտի վերահսկողությունը՝ ի դեմս ՏԱ անկախ հանձնակատարի/հանձնաժողովի, այս ինստիտուտին բնորոշ այլ էական գործիքակազմի ներդրման հետ միասին:

Մինչդեռ Հայաստանում ՏԱ իրավունքի պաշտպանության այլընտրանքը դեռևս մնում են դատարանները, որոնք տևական ժամանակ և ռեսուրսներ են պահանջում և չունեն անկախ լիազոր մարմիններին բնորոշ գործիքակազմ: Հայաստանում դեռևս ձևավորված չէ մարմին, որն ինքն իր նախաձեռնությամբ կիրականացնի տեղեկատվության ազատության իրավունքի արագ, պարզ և անկախ պաշտպանություն և խախտումների անաչառ վերանայում, կիրականացնի ՏԱ պրակտիկայի կանոնավոր և համապարփակ մշտադիտարկում, իրավիճակի վերլուծություն և լավագույն փորձի ներդրում, կապահովի ՏԱ իրավունքի իրացման վերաբերյալ խորհրդատվություն ինչպես քաղաքացիների, այնպես էլ տեղեկություն տնօրինող մարմինների համար, կապահովի ՏԱ ոլորտի օրենսդրության պարզաբանում: Այս բոլոր գործառնությունները տարբեր երկրներում գործող ՏԱ հանձնակատարի մանդատի շրջանակում են:

Մի շարք միջազգային կազմակերպություններ (ԵԽ ԳՐԵԿՈ, ԵԽ Տեղեկատվության մատչելիության հարցերով խումբ, ՏՀԶԿ, ՅՈՒՆԵՍԿՕ) Հայաստանին ուղղված իրենց գնահատման զեկույցներում և առաջարկություններում ընդգծել են ՏԱ հարցերով անկախ լիազոր մարմնի ստեղծման անհրաժեշտությունը՝ որպես ՏԱ իրավունքի կիրառումն ապահովելու կարևորագույն երաշխիք:

ՀՀ-ում ՏԱ անկախ լիազոր մարմնի/հանձնակատարի սահմանադրական ինստիտուտի ներդրումն ահրաժեշտություն է: ՏԱ լիազոր մարմնի ինստիտուտի արդյունավետ և լիարժեք գործունեության նախադրյալներից են քաղաքական կամքի առկայությունը, հանձնակատարի նշանակումը/ընտրությունը քաղաքական միջամտությունից զերծ պահելը, նշանակման բաց, թափանցիկ և մրցակցային գործընթացի ապահովումը՝ քաղաքացիության և այլ շահագրգիռ խմբերի հետ խորհրդակցությամբ, ֆինանսական անկախությունը, թեկնածուների գիտելիքներն ու փորձը, հանձնակատարի որոշումների պարտադիր ուժը և իրավասությունների լայն շրջանակը: Հատկապես անհրաժեշտ է ընդգծել, որ խնդրահարույց կլինի ՀՀ-ում ՏԱ լիազոր մարմնի ներառումը պետական կառավարման մարմնի կազմում: Դա կհակասի միջազգային լավագույն փորձին և էականորեն կխաթարի ՏԱ հանձնակատարի ինստիտուտի անկախությունը և արդյունավետությունը:

ՏԱ հարցերով անկախ, անաչառ, բավարար ռեսուրսներ ունեցող և արդյունավետ արտադատական մարմնի ստեղծումը պահանջում է ոչ միայն նոր իրավական

կարգավորումներ, այլ նաև մի շարք ինստիտուցիոնալ և գործնական նկատառումներ: Ոլորտի մասնագիտացված կազմակերպությունների, տեղական և միջազգային փորձագետների և այլ շահագրգիռ կողմերի հետ քննարկումների արդյունքում հնարավոր կլինի ձևավորել Հայաստանի համար առավել հարմար մոդել՝ հաշվի առնելով այն նվազագույն պահանջները, որոնք ներկայացված են այս վերլուծության Առաջարկներ բաժնում:

Հայաստանում SU լիազոր մարմնի ստեղծման հիմնական մարտահրավերը մնում է ամուր քաղաքական կամքը՝ պետական համակարգի թափանցիկությունն ու հաշվետվողականությունն ապահովող այս կարևորագույն երաշխիքներից մեկը կյանքի կոչելու համար: SU օրենքի բազմամյա պատմությունը ցույց է տվել, թե անկախ լիազոր մարմինը ինչ առանցքային դեր կունենա առկա խնդիրները լուծելու և տեղեկատվության ազատության լիարժեք կիրառումն ապահովելու գործում:

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ

ՀՀ, Երևան, Փ. Բուզանդի 1/4, 4-րդ հարկ

Հեռ. 091435136

Էլ. փոստ՝ foi@foi.am

www.foi.am, www.givemeinfo.am